Ժամանակակից պահանջներից ելնելով՝ իրականացվում է բնակչության կենտրոնական ազդարարման համակարգի արդիականացում: Անցկացվում է բնակչության ուսուցում, ղեկավար կազմի, մասնագետների մասնագիտական

պատրաստականության բարձրացում: Անհրաժեշտություն է առաջանում լայնորեն կիրառել ժամանակակից ուսուցման մեթոդները և տեխնիկական միջոցները:

## 2.2 ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՂԻԿ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Բնակավայրի վարչական տարածքը ընդգրկում է Խաչիկ գյուղը: Գտնվում է Վայոց ձորի մարզի Արենի համայնքում, Եղեգնաձոր քաղաքից 37կմ հեռավորությամբ դեպի հարավ: Մայրուղուց և մոտակա բնակավայրից՝ Արենիից հեռու է 21 կմ: Երևան քաղաքից հեռավորությունը կազմում է 120 կմ: Խաչիկ գյուղը գտնվում է Հայոց Լեռների դեպի արևմուտք նայող լանջի վրա: Գյուղից դեպի Շարուրի դաշտը և Արարատ լեռը բացվում է հազվագյուտ գեղեցկությամբ լայնատարած և չքնաղ տեսարան: Բնակավայրի կենտրոնը գտնվում է ծովի մակերևույթից 1850մ բարձրության վրա: Սահմանակից է հարավից Նախիջևանին՝ 27կմ ընդհանուր պետական սահմանով, հյուսիսից՝ Արենի համայնքին 5.94կմ սահմանով, արևելքից՝ Գնիշիկ համայնքին՝ 8.61կմ: Վարչական տարածքի ամենաբարձր լեռնագագաթը Հարսնասարն է՝ ծովի մակերևույթից 2773.4 մ բարձրությամբ, ամենացածր կետը՝ Զրաղացները 1600 մ բարձրությամբ:

1828 թվականին, երբ Արևելյան Հայաստանը միանում է Ռուսաստանին, տարբեր տեղի հայեր գալիս և բնակվում են Խաչիկում: Կլիման չոր, կիսանապատային է: Ձմեռը ձյունառատ է և մեղմ, ամառը՝ զով: Տարվա միջին տեղումները կազմում է 300-400մմ: Քամին՝ հարավային և հարավ-արևմտյան: Բավական մեծ կշիռ է կազմում պարզ և արևոտ օրերի քանակը: Հազվադեպ են մառախլապատ օրերը:

Գյուղում առաջին մարդահամարն անց է կացվել 1831 թվականին, որի արդյունքներով գյուղում հաշվված էր 22 ընտանիք, 101 մարդ, որից՝ 52 կին, 49 տղամարդ: Ընտանիքների թվակազմից 18-ը եղել են բնիկներ, 4-ը Պարսկաստանից ներգաղթած: 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչությունը կազմում է 1022 մարդ, տնտեսությունների թիվը՝ 255: Գյուղատնտեսական

շրջանառության մեջ գտնվում են շուրջ 600 հա վարելահողեր: Արոտավայրերը կազմում են 1389 հա, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերը՝ 4324 հա, բնակավայրի հողերը՝ 91,5 հա, որից 66 հա բնակելի կառուցապատման հողեր են, անտառային հողերը՝ 156,9 հա: Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է:

Մշակվում է ցորեն, գարի, հաճար և խաղողի այգիներ՝ 32 հա: Գյուղի տարածքում հայտնաբերված են կվարցիտային և շինարարական հանքաքարեր, ինչպես նաև բիտումային թերթաքարեր: Գյուղն ապահովված է խմելու ջրով, գործում են խմելու ջրի երեք հիմնական ջրագծերը և ներքին ցանցը: Օգտագործվում են նաև բնակավայրի ներսում բխող երեք աղբյուրները:

Տարածքում լավ աճում են ընկույզ, խաղող, խնձոր, սալոր, հացահատիկային կուլտուրաներ: Որպես հեռանկար՝ պատկերվում են զարգացած պտղաբուծությունը, անասնապահությունը, տուրիզմը, հովելությունը: Գյուղն ունի միջնակարգ դպրոց, բուժկետ, կապի հանգույց, մշակույթի տուն:

### ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԶՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԵՎ «ԽԵԼԱՑԻ ԳՅՈՒՂ» ԳԱՂԱՓԱՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՀ- ՈՒՄ ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ PEST և SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

#### 3.1 ՀՀ ԶՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Բազմամյա տարիների ջրային հաշվեկշռի տվյալների համաձայն, հանրապետության տարածքում տեղումներով տարեկան ձևավորվում է 6.2մլրդ.խոր.մ մակերևութային հոսք ևս շուրջ 1.0մլրդ.խոր.մ ներհոսում է հանրապետություն Թուրքիայից՝ Արաքս գետով: Ընդհանուր 7.2մլրդ.խոր.մ մակերևութային հոսքից 1.2մլրդ.խոր.մ ջրային ռեսուրս /ԶՌ/ ամբարվում են 80 ջրամբարներում հետագա սակավաջուր և ինտենսիվ ոռոգման ամիսներին օգտագործելու նպատակով: Եվս 2.0-2.5.մլրդ.խոր.մ օգտագործվում է հոսքի ձևավորման զուգընթաց, դրանով իսկ օգտագործվող մակերևութային ՋՌ-ի ծավալը հասցնելով ընդամենը մինչև 50% ձևավորվողի նկատմամբ, իսկ թերլցվածության պարագայում այդ ցուցանիշը համամասնորեն իջնում է: ջրամբարների Ջրամբարաշինության պարագայում այս ցուցանիշը կբարձրանա, իսկ փոքր ու միջին /մինչև 10մլն.խոր.մ/ տեղաբաշխվածության ջրամբարաշինության /ՓՄՁ/ պարագայում, աշխարհագրական առումով <<կղիվերսիֆիկացվի>> դրանց թերլցվածության ռիսկերը, կկրճատվի ջրակորուստները ջրամբար-ջրօգտագործող հատվածում, իսկ համապատասխան իրավական հիմքերի ապահովման դեպքում հնարավորություն կստեղծվի այն իրականացնել պետություն - մասնավոր գործընկերության /ՊՄԳ/ շրջանակներում:

#### Հիդրոտեխնիկական կառույցներ

Բացի վերը նշված 80 ջրամբարներից, հանրապետությունում գոյություն ունի շուրջ 450կմ մայր, 1500կմ երկրորդային և 15հազ.կմ միջտնտեսային ու ներտնտեսային ոռոգման ջրանցներ և ջրատարներ, ինչպես նաև շուրջ 300 պոմպակայաններ ու 1300 պոմպային սարքեր, որոնց շահագործման տարիքը հիմնականում գերազանցում է 50տարին: Այդ հիդրոտեխնիկական կառույցները /ՀՏԿ/, գտնվում են տեխնիկական

առումով անբավարար վիճակում, որը <<դոմինոյի էֆեկտով>> առավել վատթարանում է ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորված կապիտալ և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ չկատարելու արդյունքում:

Վերը նշվածով պայմանավորված ՀՏԿ-ներում ոռոգման ջրակորուստները զգալիորեն գերազանցում է թույլատրելի նորման՝ հանգեցելով ջրի, ոռոգելի հողատարածքների, համակարգում ծախսված ֆինանսական և այլ ռեսուրսների օգտագործման, հետևանքների: Ինչպես նաև դրանցից բխող և շաղկապվող անարդյունավետ բացասական

Գոյություն ունեցող ՀՏԿ-ների շահագործման արդյունավետությունը բարձրացման նախընտրելի եղանակներից կարող են լինել դրանց պատվիրակված կառավարման հանձնումը՝ ոչ երկարատև ժամանակահատվածում խոհեմ շահույթի տոացման և հետագայում իր իսկ կողմից շահագործման ծառայությունների մատուցման պայմանով: Իսկ գոյություն ունեցող ընդհանուր համակարգից անկախ առանձին շահագործման հնարավորությամբ, հիդրոմիավորի հիմնանորոգման կամ նորի կառուցման իրավունքը մասնավոր հատվածին հանձնում փոխշահավետ պայմանով օրինակ հետագայում ոռոգման այլընտրանքային ընկերության ստեղծում և ՀՏԿ-ի շահագործում/: Նշված կառավարման երկու ձևերի իրականացման համար նախապայման կարող է հանդիսանալ համապատասխան փոխշահավետ /պետություն-մասնավոր/ իրավական հիմքերի ստեղծումը:

Ոռոգման ջրամատակարարում

Հանրապետությունում ոռոգման ջրամատակարարումը իրականացվում է շահույթ չհետապնդող ջրօգտագործողների ընկերությունների /ԶՕԸ/ կողմից, որոնց գործունեությունը կանոնակարգվում է համապատասխան օրենքով, համաձայն որի ոռոգման ջրամատակարարումը այդ ընկերությունների միակ գործառույթն է: ՀՀ կառավարության կողմից 2007 թ. սահմանվել և մինչև այժմ գործում է 11 դրամ/խոր.մ ոռոգման ջրի վճարարաչափ: Ոռոգման ջրի միջինացված ինքնարժեքը կազմում է 22-24դրամ/խոր.մ, ֆինանսական 11-13դրամ/խոր.մ դեֆիցիտը նախատեսված է մեղմել

ՀՀ պետ բյուջեից՝ սուբսիդավորման ձևով, որի ծավալները ըստ ոռոգման բնագավառի զարգացման ուղղակիության, տարեց տարի պետք է կրճատվի:

ԶՕԸ-երի ֆինանսական առողջացման և ՀՀ պետբյուջեից սուբսիդիայի չափը համապատասխանաբար նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է ՕԸ-երի մասին օրենքում կատարել լրացումներ՝ այդ ընկերություններին վերապահելով՝ ոռոգման ջրամատակարարմանը հարակից ծառայությունների մատուցման իրականացնելու իրավասություններ /խորհրդատվություն, ոռոգում պատվիրատուի համար և այլն/: Միաժամանակ անհրաժեշտ է ստեղծել իրավական հիմքեր՝ ոռոգման ջրամատակարարման բնագավառում ծառայություններ մատուցող այլընտրանքային կոլեկտիվ ընկերությունների ձևավորման համար, որոնց կողմից կիրականացվեն նաև նոր ՀՏԿ-ների կառուցում և շահագործում:

Ոռոգման ջրի վճարաչափ/սակագին

ՀՀ կառավարության կողմից 2007 թ. սահմանված և մինչև այժմ գործող 11 դրամ/խոր.մ ոռոգման ջրի միասնական վճարաչափը, կորցրել է իր ակտուալությունը, գոնե ներկայիս գործող էներգակիրների և բնագավառի գոյատևման համար ծառահողությունների մատուցման գների առումով:

Անհրաժեշտ է ներկայիս գործող միասնական վճարաչափի փոխարեն սահմանել ոռոգման ջրի տարբերակված սակագին՝ ըստ ջրօգտագործման ծավալների, ոռոգման մեթոդների, հողի նկատմամբ մշակաբույսի համադրելիության: Սակագներ պետք է սահմանվեն նաև նոր ստեղծվող այլընտրանքային կոլեկտիվ ընկերությունների համար:

Սահմանամերձ գյուղերի զարգացման համար տվյալ ՀԿ առաջարկում է ներդնել «Խելացի գյուղ» գաղափարը որը կօգնի զարգացնել և ավելի բարեկեցիկ դարձնել սահմանամերձ գյուղերի բնակիչների կյանքը:

### 3.2 «ԽԵԼԱՑԻ ԳՅՈՒՂ» ԳԱՂԱՓԱՐԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

Աշխարհում նման գյուղերի ստեղծման հիմնական նպատակներից մեկը ուրբանիզացիայի կանխումն է: Այն շատ ավելի արդիական է Հայաստանի համար, քանի-որ՝

ա/ գյուղական բնակավայրերի մարդկանց համար այնպիսի պայմաններ պետք է ստեղծվի, որ քաղաքներում մատուցվող բոլոր անհրաժեշտ ծառայությունները մատուցվեն նաև գյուղերում,

բ/ կարևորն այն է, որ «Խելացի գյուղ»-ի հայեցակարգը թույլ է տալիս մարդկանց իրենց բնակության վայրում ավելի շատ վաստակել, քան քաղաքում:

«Խելացի գյուղի» առաջին փորձնական ծրագիրն ընդգրկելու է մի քանի համայնքներ՝ ՀՀ, Վայոց Ձորի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերից, որտեղ ավելի սուր է դրսևորվում սահմանամերձ իրավիճակը և արտագաղթը:

Նկարագրություն՝

Այսօր քաղաքները հանդիսանում են տեխնոլոգիաների, նորարարության, կրթության, առևտրի, կառավարման, տրանսպորտի, առողջապահության, մարդկային ռեսուրսների և այլնի զարգացման հիմնական կենտրոնները, և աշխարհի համախառն ներքին արդյունքի (<ՆԱ) մոտ 80%-ը, որը արտադրվում է քաղաքներում:

Քաղաքների հետագա զարգացումը քննարկվում է «Խելացի քաղաքների» գաղափարի շրջանակներում, սակայն «Խելացիությունը», որպես այդպիսին, վերաբերում է գյուղական համայնքներին:

«Խելացի գյուղերը» գյուղական վայրերում գտնվող համայնքներն են, որոնք կկիրառեն նորարարական լուծումներ՝ բարձրացնելու իրենց կայունությունը՝ օգտագործելով տեղական ուժերն ու հնարավորությունները:

Նրանք կհիմնվեն զարգացման կայուն և ռեալ մոտեցման վրա, իրականացնելու իրենց ռազմավարությունը՝ բարելավելու իրենց տնտեսական, սոցիալական և/կամ բնապահպանական պայմանները, մասնավորապես՝ մոբիլիզացնելով թվային տեխնոլոգիաների կողմից առաջարկվող լուծումները:

«Խելացի գյուղերը» կշահեն համագործակցությունից գյուղական և քաղաքային այլ համայնքների և այլ սուբյեկտների հետ:

Նախաձեռնելով և իրականացնելով խելացի գյուղերի ռազմավարությունը, հիմնվելով առկա նախաձեռնությունների վրա՝ վերջիններս կունենան հնարավորություն ֆինանսավորվելու տարբեր պետական և մասնավոր աղբյուրներից:

Խելացի գյուղերի հայեցակարգի իրականացման գործում կարևոր դեր է տրվում՝

- կյանքի որակի բարելավմանն,
- հասարակության «ծերացման» նվազեցմանն,
- ծառայությունների որակի բարձրացմանն,
- բնապահպանական միջավայրի պահպանման և արդյունավետ օգտագործման բարելավմանն,
- աշխատանքով ապահովվման՝ զբաղվածության ցածր մակարդակի վերացմանը ուղղված լուծումներին:

Հատկապես կարևոր է ընդգծել, որ այս հայեցակարգը կապված չէ այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են գյուղերի ինքնանպատակ թվայնացումը, վերը նշված մարտահրավերներին առնչվող առկա սոցիալական խնդիրներին պատրաստի լուծումներ տալը և առկա լուծումների կրկնությունը:

Խելացի գյուղի հայեցակարգի նպատակն է կենտրոնանալ տեղի բնակչության ցանկության վրա, որով ինքը պատրաստ է ներգրավվել կյանքի որակի բարելավմանը և խնդիրների լուծմանը՝ ի բարորդություն իրեն և իր ժառանգների:

Արդեն գոյություն ունեցող և որոշ դեպքերում իրականացվող նախագծերի և նախաձեռնությունների օրինակները պարզ են դարձնում, որ «խելացի գյուղերը» սկսվում են տեղի բնակիչներից, որոնք կազմակերպվում են ընդհանուր խնդրի կամ ընդհանուր տեսլականի շուրջ՝ որոշակի նպատակին հասնելու համար «գործողությունների ծրագրի» ինչ-որ ձևի իրականացման համար:

Չնայած ուրբանիզացիայի առավելություններին, դա քաղաքներին մոտ՝ շրջակա գյուղական շրջանների էկոհամակարգն է: Գյուղաբնակները, ովքեր ապրում են քաղաքին մոտ ապահովում են քաղաքի արագ զարգացումը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությամբ և սոցիալական անհավասարության պայմաններում: Նրանք որոշակի «ճնշման» տակ ստիպված են սպասարկելու քաղաքաբնակներին, որոնք այսօր հաճախ կազմում են խոշոր և տնտեսապես հզոր

դաշինքներ, քանի որ «կենտրոնական իշխանությունները» առավելություններ և արտոնություններ են տալիս քաղաքային համայնքներին և քաղաքաբնակներին՝ որոշակիորեն «ի հաշիվ» գյուղաբնակների: Սա դրսևորվում է գյուղատնտեսական ապրանքների գների վրա ճնշմամբ, քաղաքային տնտեսության մեջ առավել ներդրումներով և քաղաքներում առավել որակյալ հանրային ծառայությունների մատուցմամբ, ինչպիսիք են տրանսպորտը, առողջապահությունը, կրթությունը և այլն: Գերվելով առաջարկվող ավելի բարձր եկամուտներով և հնարավորություններով, շատ գյուղաբնակներ արտագաղթում են քաղաքներ կամ ժամանակավորապես կամ մշտապես, ներգրավվելով բանվորական ծանր աշխատանքներում: Այնուամենայնիվ, այս արտագաղթող գյուղացիները չեն օգտվում քաղաքային կյանքի առավելություններից այնպես, ինչպես մյուս քաղաքային բնակիչները: Ուստի գյուղական բնակավայրերում որոշակի միջամտության կարիքը ակնհայտ է, որոնք իրենց արտահայտությունն են գտնելու «խելացի գյուղերի» վերջնական գաղափարներում, օրինակ՝ օգտագործելով տեղական հարմարությունները և զարգացնելով ստեղծագործական տնտեսություններ և այլ ռեսուրսներ՝ քաղաքային շուկաների հետ մասնագիտացված կապեր ստեղծելու համար:

- «խելացի գյուղեր» հասկացության հիմնական բնութագրերի հայեցակարգը պետք է արձագանքի և համապատասխան պատասխան լինի, ժողովրդագրական խնդիրներին, հանրային ծառայությունների հետընթացին և ցածր սոցիալական ակտիվությանը՝ դրական իմաստով:

Նպատակը՝ կենսապայմանների բարելավում, բնակչության արտագաղթի կասեցում և կրճատումն են գյուղական վայրերում, նաև թվայնացում և սոցիալական կապիտալի զարգացում:

Իրականացման հիմնական խոչընդոտները կարող են հանդիսանալ տեխնոլոգիական, կազմակերպչական, ֆինանսական և բնակիչների տեղեկացվածության, գաղափարի ընկալման կամ ընդունման և դրան մասնակցության բացակայությունը:

«խելացի գյուղերի» հայեցակարգը պետք է աջակցություն ստեղծի գործունեության լայն շրջանակի համար, հնարավոր է, համակցված այլ գործունեության հետ,

ինչպիսիք են լայնաշերտ, թվային լուծումները և այլն: Խելացի գյուղերի ռազմավարությունները պետք է համակարգված կերպով լրացնեն այլ միջամտությունները՝ կենտրոնանալով ավելի փոքր զարգացման նպատակների վրա, որոնք լուծում են համայնքի առավել հատուկ և հրատապ կարիքները: Գյուղական համայնքների նկատմամբ պետք է կիրառվեն հետևյալ սկզբունքները՝

- նորարարական (հաճախ թվային) լուծումներ գյուղական ճկունությունը բարելավելու համար.
- զարգացման տնտեսական, սոցիալական և/կամ բնապահպանական հնարավորությունների վրա կենտրոնացում.
- տեղական ուժեղ կողմերի ու հնարավորությունների լայն կիրառում.
- մասնակցային մոտեցման վրա հիմնված ռազմավարությունների մշակում և իրականացում.
- գյուղական և քաղաքային այլ համայնքների/գործիչների հետ համագործակցության արդյունքում, առկա նախաձեռնությունների լրացում և զարգացում, ընդհուպ համայնքային միավորումներ ստեղծելու հնարավորությամբ.
- ֆինանսավորման ներգրավում տարբեր պետական և մասնավոր աղբյուրներից:

Գյուղական բնակավայրերի զարգացման առանձնահատկություններից և որոշիչներից, որոնք պայմանավորում են «խելացի գյուղեր» հայեցակարգի իրագործումը, հարկ է նշել հետևյալը.

- տարածական հեռավորությունը, համեմատաբար ավելի քիչ զարգացած տրանսպորտային և կապի ցանցը, ցանցային համագործակցության բացակայությունը,
- ձեռնարկությունների և ֆերմերային տնտեսությունների, ներառյալ նորամուծություններ իրականացնող սուբյեկտների, անբավարար թվով կազմակերպություններ, որոնք պատասխանատու են նոր գիտելիքների փոխանակման և տեղական պայմաններին դրա հարմարեցման համար, /գիտահետազոտական

կազմակերպություններն ու հաստատությունները սահմանափակում են ստեղծագործ տնտեսություն կառուցելու հնարավորությունները/.

- Նորարարական նախագծեր նախաձեռնելու և նորարարությունների զարգացման համար միջոցներ հայթայթելու դժվարություններ:

Խելացի գյուղերի հայեցակարգի իրականացման հիմնական առավելությունները կարելի է թվարկել հետևյալ կերպ.

- համայնքի ինտեգրման բարձրացում, երիտասարդներին խրախուսելով տեղական մակարդակով նախագծային գործունեություն իրականացնելու համար.
- տարեցների ներգրավվածության բարձրացում տեղական գործունեության մեջ.
- համայնք-մասնավոր հատված համագործակցության զարգացում.
- մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների ավելացում.
- սոցիալական կապիտալի զարգացում.
- ծրագրի գործունեության դիվերսիֆիկացմամբ պայմանավորված ռիսկերի նվազեցում.
- ընթացիկ ծրագրերի արդյունավետության բարելավում, օրինակ՝ ծախսերի կրճատման միջոցով.
- տեղական գյուղական շրջանների շուկայական դիրքի/մրցունակության ամրապնդում.
- ընթացիկ ծրագրերի շահագրգիռ կողմերի դիվերսիֆիկացում.
- զբոսաշրջության զարգացման միջոցով, սոցիալական և տնտեսական զարգացման արագացում.
- գիտելիքների և տեխնոլոգիաների փոխանցման արագացում.
- ժողովրդագրական փոփոխությունները,
- կայուն և կլիմայի համար բարենպաստ էներգիայի մատակարարումը:

Ակնկալվող արդյունքները՝

Հաշվի առնելով ՀՀ-ում ընտրված համայնքներում տեղային-համայնքային առանձնահատկությունները՝ «Թինկ Թանկ Արմենիա» վերլուծական կենտրոն ՀԿ-ն առաջարկում է ծրագրի իրականացում հիմնականում հինգ բաղադրիչով, որոնք պետք է միտվեն նոր հավելյալ արժեք ստեղծելուն:

Դրանք են՝

- Տեղական գործառնական կարճ պատմություն ունեցող ընկերություններին կամ անհատներին՝ /startup/, նշված պայմաններում ստեղծված ապագա արտադրանքի կամ ծառայությունների պոտենցիալ նախատիպը հաճախորդների վրա փորձարկելուն աջակցելուն, ընդհուպ ֆինանսական միջոցների հայթայթում,
- արտադրության՝ այդ թվում տեղական-տնայնագործական արհեստների զարգացումը,
- սոցիալական ծառայությունների հասանելիություն և հնարավորինս թվայնացում, որի ընթացքում դրանք հասանելի կլինեն առավելապես Ինտերնետ միջակայքում,
- «Խելացի գյուղատնտեսության» և այլընտրանքային էներգիայի ոլորտների զարգացումը
- ըստ հնարավորության՝ զբոսաշրջության զարգացում, ոլորտի թվայնացում և էլեկտրոնայինացում:

Նշված ծրագրերի շրջանակներում, ընտրված համայնքներում /տարածքներում/ կիրառվելու են նորարարական շինանյութերի օգտագործմամբ նոր կառույցների և հանգույցների կառուցում:

«Խելացի տեխնոլոգիաների» հիման վրա կստեղծվեն նաև ինժեներական հաղորդակցություններ, տների ջեռուցման համակարգեր:

Այս համայնքներում նախատեսվում է կառուցել՝ ըստ անհրաժեշտության,

- ժամանակակից էլեկտրոնային կառավարման կենտրոններ,
- ձևավորել զբոսաշրջային ենթակառուցվածք
- ամբողջությամբ համայնքի ընդգրկումը Երկրատեղեկատվական/GIS/ համակարգին:

Բոլոր բնակելի շենքեր-շինությունները, սոցիալական օբյեկտները, գրասենյակային շենքերը և հանրային սննդի օբյեկտները, գյուղատնտեսական մթերքների վերամշակման և արտադրության գործընթացը կապահովվեն էներգիայի այլընտրանքային աղբյուրներով, իսկ առաջարկվող նախագծերի իրականացման առավելությունը կտրվի 5G տեխնոլոգիաներին:

Հեռահաղորդակցությունը և ինտերնետ հասանելիությունը պետք է ապահովվի 5G ալեհավաքներով, որոնք համեմատած 4G ալեհավաքների, ավելի փոքր են և նման են մոդեմի և այսպիսի տեխնոլոգիայի տեղադրումն ավելի հեշտ է, իսկ արագությունը՝ մի քանի անգամ ավելի:

Մալուխային/կաբելային/, ինտերնետ կապը, անհրաժեշտ է որոշ դժվարամատչելի վայրերում, որտեղ առկա են կապի խափանումներ, իսկ լարային ինտերնետը կարող է ապահովել տվյալների փոխանցման շարունակականությունը: Խելացի նախագծերի լուծումների մեծ մասը հիմնված կլինի 5G ցանցի վրա:

Նշենք նաև, որ նախագծերի իրականացման հիմնական գաղափարը ծառացած խնդիրների լուծումն է, իսկ արդյունքները ենթադրում են՝

- բնական ռեսուրսների և պետական միջոցների խնայողաբար ծախսումը,
- արտագաղթի նվազեցումը՝ ըստ այդմ, վերաբնակեցման հնարավորության ստեղծումը և դրա խրախուսումը
- հավելյալ նոր արժեքի կամ ներկայանալի որևիցե նոր արտադրանքի ստեղծում, ինչը հնարավոր չի եղել մինչ վերոնշյալ հնարավորությունների կիրառումը:

### 3.3 ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ PEST ՀԱՄԱՌՈՏ

#### ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

PEST վերլուծությունը ագրոբիզնեսում երկարաժամկետ պլանավորման մարքեթինգային գործիք է, որը թույլ է տալիս հաշվի առնել շրջակա միջավայրի գործոնների ազդեցությունը: Նման ազդեցության հետևանքների կանխատեսումն օգնում է տեղեկացված որոշումներ կայացնել և նվազագույնի հասցնել սխալները:

Վերլուծության փուլերը ավելի համառոտ ներկայացված են թեզի առաջին գլխում:

Տվյալ վերլուծության համար ընտրվել են հետևյալ գործոնները

Քաղաքական գործոններ

1. Հարկային քաղաքականություն (սակագներ և արտոնություններ)
2. Պետության անդամագրման հավանականությունը միջազգային կառույցների (ԵՄ, ԵԽ)
3. Արդյունաբերությունը կարգավորող ապագա և գործող օրենսդրությունը

#### Տնտեսական գործոններ

1. Դրամի արժեզրկում
2. Գնաճի տեմպի արագացում
3. Գործազրկության մակարդակի աճ

#### Սոցիալ Մշակութային գործոններ

1. Կենսակերպի և կենսամակարդակի փոփոխություններ
2. Արտագաղթ
3. Ապրանքի որակի և սպասարկման մակարդակի պահանջներ

#### Տեխնոլոգիական գործոններ

1. Լիզինգի շուկայի զարգացում
2. Արդյունաբերության նորարարության և տեխնոլոգիական զարգացման մակարդակի բարձրացում
3. Ինտերնետի զարգացում և ներթափանցում, շարժական սարքերի զարգացում քաղաքացիների առօրյայում

Ուսումնասիրենք մեր ընտրած գործոնները մեկ առ մեկ և վերլուծենք աղյուսակի միջոցով:

#### Քաղաքական գործոններ

1. Հարկային քաղաքականություն (սակագներ և արտոնություններ)

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է հրամայական դրույթը այն մասին, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Այս պարտավորության կատարումը ենթադրում է օրենսդրաիրավական համապատասխան դաշտի առկայություն, որի առանցքն են ներկայումս կազմում հանրապետությունում գործող «Հարկերի մասին» և առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները,

հանրապետության հարկային ծառայության և օրենքով սահմանված դեպքերում պետական կառավարական այլ մարմինների կողմից ընդունված իրավական ակտերն ու հրահանգները: Հարկը պետական, հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր, անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկներից, օտարերկրյա «ՀՀ Սահմանադրություն», հոդված 45: 33 ՀՀ օրենք, (ՀՕ-107), ընդունվել է 14.04.1997., ուժի մեջ է 12.05.1997թ., հրատարակված է ՀՀՊՏ 11, 20.05.1997թ.: բանական անձանց մասնաճյուղերից, ներկայացուցչություններից), հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում: Այս բոլոր հոդվածները շատ ճկուն են նորագույն տեխնոլոգիաների և զարգացման ժամանակակից տեմպին համահունչ:

2. Պետության անդամագրման հավանականությունը միջազգային կառույցներին (ԵՄ, ԵԽ)

ՀՀ քաղաքական և տնտեսական զարգացման վեկտորը կարող է դիվերսիֆիկացիայի միջոցով զարգանալ և ընդլայնվել: Բոլոր զարգացած պետությունների օրինակները կարելի է օգտագործել ինչպես ասել է ԱՄՆ 26-րդ նախագահ Թեոդոր Ռուզվելտը «Խելացին սովորում է իր սխալների վրա, իմաստունը սովորում է ուրիշների սխալներից, բայց հիմարը երբեք չի սովորում»: Այստեղից կարելի է հետևություն անել, թե ինչքան կարևոր է ՀՀ-ը նման երկրի համար տնտեսության բազմակողմանի զարգացումը: Այսպիսով ներկա պահին լավագույն երկու կառույցները և երկիրը, որոնց հետ կարելի է համագործակցել հետևյալներն են ԵԱՏՄ, ԵՄ և Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն:

3. Արդյունաբերությունը կարգավորող ապագա և գործող օրենսդրության փոփոխություններ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, առաջնորդվելով երկրի տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի ապահովման հրամայականներով, ընդունել է գիտելիքահենք տնտեսություն

կառուցելու անհրաժեշտությունը և նախաձեռնել է իրականացնել արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերական քաղաքականություն:

Իրականացվող քաղաքականության հիմքում ընկած է արտահանման ներուժ ունեցող հեռանկարային ճյուղերի զարգացման աջակցման միջոցով տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնումը՝ շեշտադրելով վերամշակող արդյունաբերության զարգացումը: Նախարարությունը հետևողական աշխատանքներ է իրականացրել և իրականացնում, ինչպես ընդհանուր արդյունաբերության, այնպես էլ արդյունաբերության առանձին ոլորտային քաղաքականությունների մշակման և իրականացման ուղղությամբ, որի հիմնական նպատակն է կառավարման ժամանակակից մոդելների, արդի և մրցունակ տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև մարդկային կապիտալի շարունակական զարգացման միջոցով Հայաստանը դարձնել միջազգայնորեն մրցունակ տնտեսություն ունեցող երկիր:

Տնտեսական գործոններ

#### 1. Դրամի արժեզրկում

Ֆինանսներում փոխարժեքն այն գործակիցն է, որով մի արժույթը փոխանակվում է մյուսով: Վերջինս նաև համարվում է մի երկրի արժույթի գինը՝ մեկ այլ արժույթի նկատմամբ[1]: Օրինակ, այն, որ հայկական դրամի միջբանկային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 420 է, նշանակում է, որ 420 դրամը կարող է փոխանակվել 1 ԱՄՆ դոլարի հետ կամ որ յուրաքանչյուր ԱՄՆ դոլար կարող է փոխանակվել 420 դրամի հետ: Այս դեպքում ասվում է, որ դոլարի գինը, դրամի հարաբերությամբ, կազմում է 420 դրամ կամ, համարժեքորեն, որ 1 դրամի գինը դոլարի հարաբերությամբ կազմում է 1/420 դոլար:

Փոխարժեքները որոշվում են արտարժույթի շուկայում, որը բաց է բազմաթիվ վաճառողների և գնորդների համար, և որտեղ արժույթի առևտուրը շարունակական է՝ օրական 24 ժամ՝ բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի, այսինքն առքուվաճառքն իրականացվում է կիրակի օրը սկսած 20:15 (Լոնդոնի ժամանակով), մինչև ուրբաթ օրը՝ 22:00 (Լոնդոնի ժամանակով): Սփոթ փոխարժեքը ընթացիկ փոխարժեքն է: Ֆորվարդ փոխարժեքը այն փոխարժեքն է, որը սահմանվում է այսօր՝ ապագայում

կոնկրետ սահմանված ամսաթվին փոխանցումներն ու վճարումները կատարելու պայմանով: Այս բոլոր գործընթացները ազդում են ուղղակի կերպով ՀՀ տնտեսության վրա և դրական և բացասական:

## 2. Գնաճի տեմպի արագացում

2020 և 2021 թվականներին ՀՀ տնտեսությունը բախվել է մի շարք բացասական երևույթների ազդեցությունների՝ սկսած COVID-19 համավարակից և Արցախյան պատերազմից մինչև քաղաքական անկայունություն, արտահերթ ընտրություններ և անորոշությունների էական աճ: Այս պայմաններում, 2020թ. դեկտեմբեր ամսից սկսել է արագանալ գնաճի տեմպը՝ հանգեցնելով սոցիալտնտեսական բացասական հետևանքների սրմանը: 2021թ. արձանագրվել է վերջին 10 տարիների ամենաբարձր գնաճը, ինչը պայմանավորված է եղել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոններով: Այդպիսի բարձր գնաճն իր ազդեցություններն է ունեցել մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշների վրա: ՀՀ կենտրոնական բանկը, արձագանքելով ստեղծված իրավիճակում գնաճային սպասումներին, 2020թ. դեկտեմբերից շարունակաբար բարձրացրել է դրամավարկային քաղաքականության (ԴՎՔ) տոկոսադրույքը՝ 4.25%-ից 2022թ. մարտին հասցնելով 9.25%-ի, ինչն իր հերթին բացասաբար է ազդել տնտեսական ակտիվության վրա: Գնաճի պայմաններում նվազել են նաև բնակչության իրական եկամուտները՝ հանգեցնելով կենսամակարդակի անկմանը: Սույն վերլուծությունում իրականացվել է նշված ուղղություններով գնաճի ազդեցությունների մանրամասն ուսումնասիրություն՝ առավել ակնհայտ դարձնելով գնաճի մակրոտնտեսական հետևանքները: Միաժամանակ, առանձին ապրանքատեսակների գների աճի տեմպերն էականորեն տարբերվել են միմյանցից: Այդ իսկ պատճառով սույն աշխատանքում իրականացվել է ինչպես գնաճի վերլուծություն՝ ըստ նպաստող ապրանքատեսակների, այնպես էլ ուսումնասիրվել է բնակչության տարբեր դեցիլային խմբերի համար սպառողական գների փոփոխության չափը: Համադրելով այդ արդյունքները բնակչության եկամուտների փոփոխության հետ՝ հնարավոր է եղել եզրակացություններ անել բնակչության կենսամակարդակի փոփոխության վերաբերյալ: Պետք է նշել նաև, որ 2021 թվականին գնաճի տեմպի արագացումը և դրա հետևանքները 2022թ. կարող են

ավելի ուժգնանալ: Պատճառն այն է, որ 2022թ. փետրվարից սկսված ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում արդեն իսկ նկատվում է պարենի և էներգակիրների համաշխարհային գների աճ, ինչը միանշանակ կազդի նաև ՀՀ տնտեսության վրա՝ հանգեցնելով գների աճի հետագա արագացմանը: Հետևաբար, սույն աշխատանքում նաև վերլուծվել են ռուս-ուկրաինական հակամարտության հնարավոր ազդեցությունները (առկա անորոշությունների պարագայում) գնաճի վրա:

### 3. Գործազրկության մակարդակի աճ

ՀՀ-ում պահպանվում է աշխատանքային ներուժի արդյունավետ օգտագործման խնդիրը, թեև վերջին մի քանի տարիներին նկատվում է գործազրկության մակարդակի նվազում: Դեռևս բաց է մնում երիտասարդների, կանանց և կրթական ցածր մակարդակ ունեցողների զբաղվածության հարցը: Ուստի հարկավոր է մեղմացնել աշխատանքի անցնելու պայմանները երիտասարդների համար, հաճախակի կազմակերպել աշխատանքի տոնավաճառներ՝ տեղեկատվության հասանելիությունը ապահովելու համար: Որոշակի մասնագիտությունների գծով, որոնց պահանջարկը չունի աշխատաշուկան, բուհերում կատարել տեղերի սահմանափակումներ և ավելացնել այն մասնագիտությունների տեղերը, որոնց պահանջարկն ապագայում ավելանալու է, բացի այդ՝ կազմակերպել ուսուցումներ, դասընթացներ գործազուրկներին անհրաժեշտ հմտություններով և ունակություններով ապահովելու համար: Նոր աշխատատեղեր ստեղծել մարզերում, հատկապես գյուղական համայնքներում, մշակել և իրականացնել առանձին շրջանների հատուկ նպատակային ծրագրեր՝ հաշվի առնելով տարածքային առանձնահատկությունները, բացի այդ՝ աշխատանքային ծրագրերի միջոցով բնակեցնել սահմանամերձ բնակավայրերը: Արտագաղթը շարունակում է ավելանալ, ուստի պետք է բարենպաստ պայմաններ ստեղծել ինչպես գործատուների, նրանց բիզնեսի զարգացման, այնպես էլ վարձու աշխատողների համար: Բիզնեսի զարգացման համար հարկավոր է նաև ստեղծել ազատ մրցակցային պայմաններ և վարել հարկաբյուջետային օժանդակող քաղաքականություն: Կորոնավիրուսի պատճառով մի շարք ոլորտներում աշխատանքի դադարեցման պատճառով գործազրկության մակարդակի անկում գրանցվեց (թեպետ շատերը աշխատում էին

տնից՝ առցանց հարթակում), սակայն այսօր արդեն աստիճանաբար վերադառնում ենք նախկին ապրելաձևին: Նկատենք, որ շատերը շարունակում են աշխատել առցանց: Այս հանգամանքը կնպաստի մարդկանց մեջ այլ մտածողության ձևավորմանը, աշխատելու այլընտրանքային մեթոդների կիրառմանը:

Սոցիալ Մշակույթային գործոններ

1. Արտագաղթ

Արտագաղթի թեման Հայաստանի սոցիալ-քաղաքական կյանքում ամենաքննարկվող և շահարկվող թեմաներից է: Վիճակագրական կոմիտեն հրապարակել է 2022-ի ժողովրդագրական իրավիճակի, այդ թվում՝ սահմանահատումների և միգրացիայի մնացորդի վերաբերյալ տվյալները:

Այսպես, 2022-ին Հայաստան է ժամանել 3 394 371 և Հայաստանից մեկնել է 3 355 639 անձ: Սահմանահատումների հաշվեկշիռը դրական է՝ 38 732 անձ:

Ըստ Վիճկոմիտեի տվյալների՝ ամենաշատ սահմանահատումներն իրականացվել են Զվարթնոց օդանավակայանով: Սակայն զգալի աճել են նաև Բագրատաշենի անցակետով սահմանահատումները: Եթե 2021 թ.-ին այս անցակետով գրանցվել էր 217 830 մուտք, ապա 2022 թ.-ին՝ 1 078 111, այսինքն՝ 5 անգամ ավելի:

Ինչ վերաբերում է ՀՀ փաստաթղթերով սահմանահատումներին, ապա հաշվեկշիռը ինչպես նախորդ տարի, այս տարի ևս բացասական է՝ – 27 941: 2022-ին ՀՀ փաստաթղթերով Հայաստան է ժամանել 1 479 798 մարդ, մեկնել՝ 1 507 739-ը: Համեմատելով մյուս տարիների միգրացիայի ցուցանիշը նվազել է արձանագրվել է վատագույն ցուցանիշի նկատմամբ 49%-ով նվազում:

Տեխնոլոգիական գործոններ

1. Լիզինգի շուկայի զարգացում

Լիզինգը հանդիսանում է բավական գրավիչ ֆինանսական գործիք Հայաստանի տնտեսության վերազինման և տնտեսական աճի ապահովման հարցում, սակայն Հայաստանում լիզինգի զարգացման ճանապարհին կան նաև խոչընդոտներ՝ լիզինգի նկատմամբ հասարակության վախը, որակյալ մասնագետ-կադրերի պակասը, շուկայավարման, ինչպես նաև տեղեկատվական, խորհրդատվական սպասարկման աշխատանքների բարելավման պասիվությունը, իրավական և մաքսային

խոչընդոտները: Ներկայումս ՀՀ ՔՕ նշված է միայն ֆինանսական վարձակալության մի քանի հոդվածներ, սակայն լիզինգի բազմատեսակ գործիքները կարող են կիրառություն գտնել տեղական տնտեսությունում: Հասկանալի է, որ օրենսդրության կատարելագործումը բարդ և ժամանակատար գործընթաց է, սակայն, հաշվի առնելով նշված գործոնի անմիջական ազդեցությունը լիզինգի արդյունավետության բարձրացմանը, այդ խնդիրը հարկավոր է լուծել հնարավորինս սեղմ ժամկետներում:

Սոցիալ Մշակույթային գործոններ

2. Կենսակերպի և կենսամակարդակի փոփոխություններ
3. Ապրանքի որակի և սպասարկման մակարդակի պահանջներ

Տեխնոլոգիական գործոններ

2. Արդյունաբերության նորարարության և տեխնոլոգիական զարգացման մակարդակը
3. Ինտերնետի զարգացում և ներթափանցում, շարժական սարքերի զարգացում քաղաքացիների առօրյայում

Քանի որ ՀՀ-ն բավականին արագ զարգացող երկիր է հետևաբար կարելի է հետևություն կատարել, որ ՀՀ-ում կա կենսամակարդակի և կենսակերպի փոփոխությունների բարձր տեմպ: Միևնույն ժամանակ նոր տեխնոլոգիաների և ինտերնետի զարգացման, արդյունաբերության մեջ նորարարությունների օգտագործումը դառել է թրենդային: Այս բոլոր նախադրյալները առաջացնում են սպառողի կողմից պահանջվող արտադրանքի կամ ծառայության նոր մակարդակ և որակ:

Հետևյալ բոլոր գործոնները ըստ կարևորության ներկայացվել է ՀՀ տնտեսության հետ կապ ունեցող գործարարներին և մասնագետներին իրենց սուբյեկտիվ գնահատականը ստանալու համար:

Հարցմանը մասնակցած փորձագետներն են

«Թինկ Թանկ Արմենիա վերլուծական կենտրոն» ՀԿ նախագահ Հակոբ Մարտիրոսյանը, բազմաթիվ ընկերությունների հիմնադիր և հովհաննավորող Արտաշես Հակոբյանը, հիմնադրամի նախագահ, ՍՊԸ տնօրեն Անդրանիկ

Խոջիկյանը, դատական կարգադրիչների ծառայության պետ Ռոբերտ Ղազարյանը, տեխնիկական գիտությունների թեկնածու Ռոբերտ Հակոբյանը:

Նրանք իրենց՝ ՀՀ գյուղատնտեսության մասին պատկերացումների հիման վրա գնահատել են ընտրված գործոնների շրջակա միջավայրի ազդեցության տակ փոփոխման հավանականությունը:

Աղյուսակում 3.3.1

PEST վերլուծության հինգ մասնագետների կողմից տրված գնահատականների արդյունքներ

Գործոնի անվանումը	2	3					4	5	
		Փորձագիտական գնահատական							
	Գործոնի ազդեցությունը	Հակոբ Մարտիրոսյան	Արտաշես Հակոբյան	Ռոբերտ Ղազարյան	Անդրանիկ Խոջիկյան	Ռոբերտ Հակոբյան	Միջին փորձագիտական գնահատական	Միջին կշռված գնահատական	
<b>Քաղաքական գործոն</b>									
1	Հարկային քաղաքականություն (սակագներ և արտոնություններ)	3	3	3	2	5	4	3.4	0.39
2	Պետության անդամագրուման հավանականությունը միջազգային կառույցների (ԵՄ, ԵԽ)	3	2	1	3	4	3	2.6	0.30
3	Արդյունաբերությունը կարգավորող ապագա և գործող օրենսդրությունը	2	2	4	1	4	4	3	0.23
<b>Տնտեսական գործոն</b>									
1	Հիմնական արժույթի փոխարժեքները	2	4	5	3	3	2	3.4	0.26
2	Գնաճի տեմպ	3	4	5	3	4	3	3.8	0.44
3	Գործազրկության մակարդակի աճ	3	5	3	2	2	1	2.6	0.30
<b>Սոցիալ Մշակույթային գործոն</b>									
1	Կենսակերպի և կենսամակարդակի փոփոխություններ	2	5	3	3	4	5	4	0.31
2	Միգրացիայի տեմպի բացասական փոփոխություն	1	1	4	2	3	1	2.2	0.08
3	Ապրանքի որակի և սպասարկման մակարդակի պահանջներ	2	1	2	4	4	5	3.2	0.25
<b>Տեխնոլոգիական գործոն</b>									
1	Լիզինգի շուկայի զարգացում	3	3	4	4	4	5	4	0.46
2	Արդյունաբերության նորարարության և տեխնոլոգիական զարգացման մակարդակը	1	1	3	4	4	4	3.2	0.12
3	Ինտերնետի զարգացում և ներթափանցում, շարժական սարքերի զարգացում քաղաքացիների առօրյաում	1	3	3	3	5	4	3.6	0.14
Ընդամենը		26						39	

Տվյալ աղյուսակից առանձնացնում ենք ամեն ենթաբաժնից առավել ազդեցիկ գործոնը և ուսումնասիրում ենք այն՝ գտնելով լուծումներ տվյալ գործոնի ազդեցությունը թուլացնելու համար:

### Աղյուսակում 3.3.2

#### Ուսումնասիրված գործոնների վերլուծություններ

<b>Քաղաքական գործոն</b>		<b>ՀՀ ում գյուղատնտեսության փոփոխություն</b>	<b>Անհրաժեշտ գործողություններ</b>	
1	Հարկային քաղաքականություն (սակագներ և արտոնություններ)	0.39	Գյուղատնտեսության վրա այս գործոնը ազդում է ուղղակի եղանակով ինչի արդյունքում ցանկացած փոփոխություն մեծ ցնցումներ կարող է առաջացնել:	Հարկային քաղաքականությունը պետք է վարել զգուշորեն և շատ երկար ու մանրակրկիթ ուսումնասիրելով որպեսզի չտուժի տնտեսվարողը:
<b>Տնտեսական գործոն</b>				
2	Գնաճի տեմպ	0.44	Սա աշխարհին բնորոշ տնտեսական ռիսկ է որի արդյունքում նկատվում է զարգացած երկրներում բարձր գներ և բարձր աշխատավարձ իսկ զարգացող պետություններում հակառակ պատկերն է կան ցածր գներ բայց աշխատավարձերն նույնպես ցածր են :	Տվյալ գործոնի վրա կարող է ազդել անմիջականորեն միայն պետությունը : Պետք է պատկան մարմինները մշտական վերահսկում կատարեն շուկայի մրցակցությանը և պետք է աշխատեն այն ուղղությամբ արպեսզի արտերկրից ժամանած բարձ աշխատավարձով ապրող անձը չազդի ներկա շուկայի գների վրա որովհետև այդ ինֆլացիայի պարագայում տեղացի ժողովրդի մուտքերը չեն բավարարում նման կտրուկ աճին:
<b>Սոցիալ Մշակութային գործոն</b>				
1	Կենսակերպի և կենսամակարդակի փոփոխություններ	0.31	Սա բավականին դրական գործոն է հասրակության համար բայց առաջանում է մեծ ռիսկ կապված արդեն ներդրումներ կատարած տնտեսվարողի համար: Տնտեսվարողի համար առաջանում է վտանգավոր իրավիճակ երբ իր արտադրանքը կամ ծառայությունը որի համար կատարել է մեծ ներդրում արդել այնևս ակտուալ չէ սպառողի համար: Հետևաբար առաջանում է Պահանջարկի փոփոխություն:	Նոր տնտեսվարողը կամ նոր ներդրում կատարողը պետք է միշտ հեռանկարային պլաններ կազմի: Չի կարելի զբաղվել բիզնեսով և միաժամանակ չհետևել աշխարհի զարգացմանը: Ճիշտ կազմած ռազմավարությունը կապահովի տվյալ ռիսկի գործոնի ազդեցության նվազեցմանը անգամ նաև բացառմանը:
<b>Տեխնոլոգիական գործոն</b>				
1	Լիզինգի շուկայի զարգացում	0.46	Լիզինգի շուկան ՀՀ ում զարգանում է բավականին արագ տեմպերով և միևնույն ժամանակ պետությունը ստեղծում է ավելի լավ պայմաններ տնտեսվարողների համար տարբեր սուբսիդավորման ծրագրերով: Պետք է լինել աչալուրջ և պատրաստ լինել մի իրավիճակի երբ կլինեն կազմակերպություններ որոնք արդեն կունենան վարկային շատ մեծ պարտավորություններ որը ևս կառաջացնի ռիսկ կապված տվյալ կազմակերպության հետագա կյանքի և զարգացման հեռանկարների:	Տվյալ իրավիճակում առաջարկվում է պետության կողմից սահմանել հստակ պահանջներ և սահմանաչափեր տնտեսավարողներին տրվող լիզինգների ժամանակ որպեսզի չառաջանա բիզնեսի մեծ ծանրաբեռնվածություն:

### 3.4 ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ SWOT ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

SWOT-ը ձեռնարկության կամ կոնկրետ արտադրանքի ուժեղ և թույլ կողմերի մարքեթինգային և այլ ուսումնասիրությունների մի շարք է: Վերլուծության ընթացքում հայտնաբերվում և գնահատվում են բոլոր գործոնները, որոնք ուղղակի և անուղղակիորեն ազդում են ծրագրի վրա: Ուսումնասիրության ամեն բաժնում ընտրվել են երկուսից երեք ճյուղեր:

- S (strengths) - ուժեղ կողմեր.
  1. Կատարյալ մրցակցություն,
  2. Ինքնարժեք,
  3. Համաշխարհային շուկայում ճանաչելիություն

#### 1.0 Կատարյալ մրցակցություն

Կատարյալ մրցակցությունը մնացած երևույթների նման ունի իր դրական և բացասական կողմերը բայց ներկա պահին քննարկելու ենք միայն դրական կողմերը, Շուկան համարվում է կատարյալ մրցակցային, երբ շուկայական գինը դուրս է վաճառողների և գնորդների վերահսկողությունից և կախված չէ արտադրության ծավալից:

Այլ կերպ ասած՝ կատարյալ մրցակցությունը շուկայական կառուցվածքի այն տեսակն է, որի դեպքում շուկայում առկա են միատեսակ ապրանքների բազմաթիվ վաճառողներ և գնորդներ, որոնցից որևէ մեկը առանձին չի կարող էական ազդեցություն ունենալ ընթացիկ շուկայական գնի վրա:

Կատարյալ մրցակցության բնորոշ գծերն են.

1. վաճառողների և գնորդների մեծ թվաքանակը շուկայում, որոնցից յուրաքանչյուրի տեսակարար կշիռն այնքան փոքր է շուկայական առաջարկի և պահանջարկի մեջ, որ բացառվում է շուկայական գնի վրա ներազդման հնարավորությունը: Այս պարագայում առանձին ֆիրմայի կողմից արտադրանքի շատ կամ քիչ իրացումը չի ազդի շուկայական գնի վրա: Որևէ արտադրողի կողմից շուկայական գնից բարձր գնի սահմանումը կհանգեցնի վաճառքի կորստի, քանի որ գնորդները լայն

հնարավորություններ ունեն անմիջապես կողմնորոշվելու դեպի բազմաթիվ այլ արտադրողների նույնատիպ արտադրանքը՝ ավելի ցածր շուկայական գնով, իսկ շուկայական գնից ցածր գնի սահմանման փորձի դեպքում նրանք անհարկի կտուժեն գների տարբերության պատճառով, քանի որ կարող էին արտադրանքն իրացնել ավելի բարձր շուկայական գնով:

2. միատեսակ արտադրանքի վաճառքը, ինչը նշանակում է, որ սպառողի համար միևնույն է, թե որ արտադրողից կգնի ապրանքը:

3. շուկա մուտք գործելու ազատությունը, այսինքն՝ շուկա մուտք գործելու արգելքներ չկան և յուրաքանչյուրը առանց որևէ սահմանափակման կարող է մտնել շուկա և իրականացնել օրենքով չարգելված գործունեություն:

4. գների նկատմամբ վերահսկողության բացակայությունը, ինչը պայմանավորված է վաճառողների մեծ թվով: Յուրաքանչյուր վաճառող ապահովում է ընդհանուր պահանջարկի շատ փոքր մասնաբաժինը, հետևաբար, չի կարող գին թելադրել շուկայում և սահմանել շուկայական գնից բարձր գին: Ըստ էության, կատարյալ մրցակցային շուկայում գները կարգավորվում են առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ, իսկ արտադրողները համաձայնվում են արտադրանքը վաճառել տվյալ գնով:

5. Ոչ գնային մրցակցության բացակայությունը:

6. Տեղեկատվության մատչելիությունը, ինչը նշանակում է, որ և գնորդները, և վաճառողները լիովին տեղեկացված են շուկայի իրավիճակի մասին:

7. Ֆիրմաների միջև գաղտնի համաձայնության անհնարինությունը, ինչը պայմանավորված է ֆիրմաների շատ մեծ թվով, այսինքն՝ մրցակից ֆիրմաները գործում են միմյանցից անկախ:

Կատարյալ մրցակցային շուկայի մոդելը ցույց է տալիս, թե տեսականորեն ինչպե՞ս պետք է գործի իդեալական շուկայական տնտեսությունը և հասարակությունն ի՞նչ օգուտներ կարող է ստանալ կատարյալ մրցակցային շուկայի պայմաններում:

Կատարյալ մրցակցային շուկայի դասական օրինակ է գյուղմթերքի շուկան:

Մրցակցային շուկայում այս կամ այն ապրանքի շուկայական գնի և քանակի միջև գոյություն ունի այնպիսի հարաբերակցություն, որ շուկայական գնի աճը հանգեցնում է պահանջարկի կրճատմանը և ընդհակառակը, որքան ցածր է գինը, այնքան մեծ է իրացվող ապրանքի քանակը:

Կատարյալ մրցակցությունը շուկայական այն պարզագույն կառույցն է, որի հետազոտությունը լայն հնարավորություններ է ընձեռում շուկայի գործունեության հիմնական օրինաչափություններն առավել լիարժեք պատկերացնելու համար:

Կատարյալ մրցակցային շուկայի պայմաններում մեծաթիվ արտադրող և վաճառող մրցակիցների առկայությունը հանգեցնում է նրան, որ յուրաքանչյուրի մասնաբաժինն այնքան փոքր է ընդհանուր առաջարկի մեջ, որ որոշակի ազդեցություն չի ունենում շուկայական գնի վրա, որը ձևավորվում է պահանջարկի և առաջարկի հարաբերակցության հիման վրա:

Փաստորեն, կատարյալ մրցակցության պայմաններում առանձին կազմակերպությունը զրկված է շուկայում գնային քաղաքականություն վարելու հնարավորությունից և չի կարող մասնակցել գների կարգավորման գործընթացին: Այս իսկ պատճառով, կամակերպությունները հարմարվում են շուկայի կանոններին և ընդունում են շուկայում ձևավորված հավասարակշիռ գինը:

Կատարյալ մրցակցային շուկայում ապրանքների պահանջարկն ու առաջարկը մշտապես փոփոխվում են, ինչի հետևանքով գները գտնվում են անընդհատ շարժման մեջ: Շուկայական հավասարակշռությունը հաստատվում է այն դեպքում, երբ առաջարկը հավասարվում է պահանջարկին, որին համապատասխան ձևավորվում է հավասարակշիռ գինը: Շուկայական հավասարակշռությունը կարող է խախտվել բազմաթիվ արտաքին և ներքին գործոնների, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների ազդեցությամբ, մասնավորապես՝ արտադրության տեխնոլոգիան, արտադրողների և սպառողների սպասումները, նախապատվությունների և հակումների փոփոխությունները և այլն:

Չնայած այն հանգամանքին, որ պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունը և հավասարակշիռ գնի առկայությունը ակնթարթային երևույթներ են, դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել շուկայական

կառուցակարգին բնորոշ այն հիմնական օրինաչափությունները, որոնք կարող են նպաստել շեղումների կարգավորմանը և հավասարակշիռ վիճակի ստեղծմանը:

Կատարյալ մրցակցային շուկայի պայմաններում պահանջարկի ու առաջարկի և գնի ձևավորման կառուցակարգի, հավասարակշռության փոփոխությունների, օրինաչափությունների վերլուծությունը և ստացված արդյունքները հնարավորություն են ընձեռում բացահայտել ընդհանուր հավասարակշռության հասնելու կարևորագույն պայմանները, և մասնավորապես՝ գների փոփոխության ազդեցությունը պահանջարկի մեծության փոփոխության վրա:

## 2.0 Ցածր ինքնարժեք

Ինքնարժեք, զարգացած ապրանքային արտադրության տնտեսական կատեգորիա, որը դրամական ձևով արտահայտում է ապրանքի արտադրության և իրացման վրա ձեռնարկության ընթացիկ բոլոր ծախսերը: Օգտագործվում է որպես եկամտաբերության որոշման հիմնական գործոն:

Ձեռնարկության աշխատանքի վերջնական արդյունքը բնութագրող հիմնական ցուցանիշներից է արտադրանքի ինքնարժեքը: Դա իրենից ներկայացնում է արտադրական գործընթացում օգտագործվող բոլոր ռեսուրսների՝ հումքի, նյութերի, վառելիքի, հիմնական ֆոնդերի, աշխատանքային ռեսուրսների, ինչպես նաև արտադրանքի արտադրության և իրացման վրա կատարված ծախսերի դրամական ծախսերը:

Ինքնարժեքը արտադրության ընդհանուր արժեքն է՝ արտահայտված դրամական արտահայտությամբ: Ձեռնարկության վաճառքի քաղաքականությունը կախված է այս ցուցանիշից. եթե այն չափազանց բարձր է, ապա վերջնական գինը կլինի չափազանց բարձր, ինչը կազմակերպության արտադրանքը կդարձնի անմրցունակ:

Արտադրության արժեքը արտացոլում է ձեռնարկության արդյունավետությունը, նրա բոլոր թերությունները և դրական կողմերը: Այն ներկայացնում է ոչ միայն տնտեսական ամենակարևոր կատեգորիան, այլև որակական ցուցանիշ, որը բնութագրում է ձեռնարկության տրամադրության տակ գտնվող բոլոր ռեսուրսների օգտագործման մակարդակը:

Արտադրության ծախսերի կրճատումը հնարավորություն է տալիս.

1. արտադրել մրցունակ ապրանքներ ցածր ինքնարժեքով.
2. կիրառել ավելի ճկուն գնային քաղաքականություն
3. բարձրացնել շահույթը, որը մնում է ձեռնարկության տրամադրության տակ.
4. ապահովել կազմակերպության ֆինանսական կայունությունը.

### 3.0 Համաշխարհային շուկայում ճանաչելիություն

Այս տարի Հայաստանը գյուղատնտեսական մթերքների արտահանման ռեկորդ է սահմանել. Հայաստանից արտահանվել է շուրջ 200 հազար տոննա գյուղմթերք: Իսկ 2020 թվականին արտահանվել էր 145 հազար տոննա գյուղմթերք: Գյուղմթերքի արտահանման հիմնական ուղղությունը ԵԱՏՄ երկրներն են: Հայկական գյուղմթերքը հատկապես պահանջարկ ունի Ռուսաստանում, Վրաստանում և Բելառուսում: Հայաստանը փորձում է զարգացնել առևտրային հարաբերությունները այլ երկրների հետ. Մերձավոր Արեւելքում, Կատարում, ԱՄԷ-ում, Քուվեյթում հայկական գյուղմթերքը մեծ պահանջարկ ունի, հատկապես Հայաստանից արտահանվող հատապտուղները:

Արտահանման ծավալներով առաջատարը կարտոֆիլն է: Նախորդ տարի Հայաստանն արտահանել է ավելի քան 480 հազար տոննա կարտոֆիլ: Հաջորդ հանրաճանաչ գյուղատնտեսական ապրանքը ծիրանն է: Նախորդ տարի արտահանվել է 35 հազար տոննա ծիրան: Իսկ երրորդ ամենատարածվածը լոլիկն է: 2021 թվականին արտահանվել է 34 հազար տոննա: Հայաստանն արտահանում է կեռաս, դեղձ, խնձոր, վարունգ և հատապտուղ:

Գյուղմթերք արտահանելիս ակտիվ ժամանակահատվածը որոշվում է արտահանվող ապրանքների բերքահավաքի սեզոնով:

- Ծիրան - հունիսի կեսերից հուլիսի կեսերը,
- Խաղող - օգոստոսի վերջից հոկտեմբերի կեսերը,
- Դեղձ՝ հուլիսի վերջից հոկտեմբերի կեսեր,

- Բալ և քաղցր բալ - մայիսի վերջից օգոստոսի սկիզբ
- Սալոր - հունիսի կեսերից մինչև սեպտեմբերի կեսերը:
- W (weaknesses) - թույլ կողմեր:

1. Գյուղատնտեսության մեքենայացման թույլ աստիճան,
2. Հարևան երկրների հետ հարաբերություններ,
3. Արտադրանքի ծավալներ

#### 1.0 Գյուղատնտեսության մեքենայացման թույլ աստիճան

Հանրապետությունում դաշտային գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածությունը կազմում է ընդամենը 10%, իսկ տեխնիկայի միջին տարիքը՝ 20-25 տարի: Ընդ որում, եթե հին տեխնիկան լավ խնամված է, ապա երկար է ծառայում, ինչը չի կարելի նշել կոմբայնների մասին. պահեստամասերի բացակայության հետևանքով բերքի կորուստը կարող է հասնել մինչև 40%-ի: Ավելի վատ վիճակում է գտնվում անասնապահական համալիրի հագեցվածությունը անասնապահական տեխնիկայով (օրինակ՝ գոմերի մաքրում, կթում, կաթի պահեստավորում, տեղափոխում):

#### 2.0 Հարևան երկրների հետ հարաբերություններ

##### Վրաստանի հանրապետություն

Թուրքիայի և Ադրբեջանի հետ Հայաստանի փակ սահմանների և Հայաստանի՝ դեպի ծով ելք չունենալու պատճառով Վրաստանը կենսական դեր է խաղում Հայաստանի համար տարբեր ապրանքների արտահանման և ներմուծման առումով: Հայաստանի և Վրաստանի միջև կա երկաթուղի, որով արտահանվում է հայկական ապրանքների մեծ մասը:

##### Թուրքիայի հանրապետություն

Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը փակ է, և պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ չկան.

##### Ադրբեջանի հանրապետություն

Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանը փակ է, և պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ չկան.

Իրանի Իսլամական հանրապետություն

Չնայած կրոնական և գաղափարական տարածայնություններին, Հայաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության հարաբերությունները մնում են ջերմ, իսկ Հայաստանն ու Իրանը ռազմավարական գործընկերներ են տարածաշրջանում: Հատկապես կարևոր է էներգետիկ անվտանգության ոլորտում համագործակցությունը, որը նվազեցնում է Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից և ապագայում կարող է նաև իրանական գազը Եվրոպա մատակարարել Վրաստանի և Սև ծովի միջոցով:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի սահմանների շրջափակման համատեքստում Իրանի հետ կարճ սահմանը Հայաստանի համար մեծ նշանակություն ունի: Հայաստանի և Իրանի միջև ներկայումս գործող երկաթուղի չկա: Դրա կառուցման վերաբերյալ կան նախագծեր և պայմանավորվածություններ:

### 3.0 Արտադրանքի փոքր ծավալներ

Գյուղատնտեսությունը համարվում է երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկը: 1998-2002 թվականներին ՀՆԱ-ում ագրոարդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 35%, որից 23-26%-ը բաժին է ընկել գյուղատնտեսությանը: Հանրապետության ընդհանուր 2974.3 հազ. հա հողային տարածքներից միայն 69.8%-ը կարելի է օգտագործել գյուղատնտեսական նպատակներով, իսկ տարածքի մոտ 90%-ը գտնվում է ծովի մակերևույթից ավելի քան 1000մ բարձրության վրա և ունի 6 և ավելի աստիճան թեքություն: ՀՀ գյուղատնտեսությունը ծավալվում է 14 հազ. կմ<sup>2</sup>-ից պակաս հողատարածությունների վրա, որից 520 հազ. հեկտարը (37.3%) վարելահողեր են, մոտ 40 հազ. հեկտարը (2.9%)՝ բազմամյա տնկարկներ, 143 հազ. հեկտարը (10.3%) կազմում են խոտհարքեր, իսկ 689 հազ. հեկտարը (49.5%)՝ արոտավայրեր:

Այս ցուցանիշները համաշխարհային շուկայի համար շատ չնչին են անգամ լինում են իրավիճակներ երբ չի բավարարում նաև ներքին շուկայի սպառման համար այդ իսկ պատճառով ստիպված է լինում ՀՀ ներկրել որոշ գյուղատնտեսական ապրանքներ:

• O (opportunities) - հնարավորություններ.

1. Պետության կողմից տրամադրվող օգնություն,
2. Վարկային կազմակերպությունների կողմից տրվող հնարավորություններ,
3. Ներգաղթ

1.0 Պետության կողմից տրամադրվող օգնություն

1. «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության ծրագիր
2. Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր
3. Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման աջակցության ծրագիր
4. Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիր
5. Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-2026 թվականների ծրագիր
6. Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր
7. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր
8. Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր
9. Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք

մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագիր

10. Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական ծրագիր
11. Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագիր
12. Հողային բարեփոխումների փորձնական ծրագիր
13. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագիր
14. Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիր

## 2.0 Վարկային կազմակերպությունների կողմից տրվող հնարավորություններ

Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի հիմնական նպատակն ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ լիզինգի մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է, որը նախադրյալներ կստեղծի գյուղատնտեսական ծագման մթերքների և դրանց վերամշակված արտադրանքի արտադրության ծավալների ավելացման, միջազգային չափորոշիչներին համապատասխան որակական և անվտանգության պահանջների ապահովման, մրցունակության բարձրացման, արտահանման ծավալների ավելացման, ինչպես նաև ներկրվող արտադրանքը տեղական արտադրությամբ փոխարինելու համար:

## 3.0 Ներգաղթ

Ներգաղթի պատճառները տարբեր են՝ տնտեսական (աշխատուժի ներմուծում), ռազմական (օտար հողերի զավթում), քաղաքական (փախուստ քաղաքական, ռասայական, կրոնական ևն հետապնդումներից): Ներգաղթ արտագաղթի հետ

մեկտեղ նպաստել է բազմաթիվ երկրների բնակչության ձևավորմանը: Ներգաղթի ժողովրդագրական ցուցանիշները որոշվում են ներգաղթողների քանակով և սեռատարիքային կառուցվածքով (գերակշռում են երիտասարդ և միջին տարիքի անձինք, այդ թվում՝ տղամարդիկ): ՀՀ-ում աշխարհաքաղաքական ստաբիլության հաստատումից հետո հնարավորություն է առաջանում ներգաղթի աճի, ինչը միանշանակ կնպաստի տնտեսության աճին և զարգացմանը:

- T (treats) - սպանալիքներ.

1. Կլիմայական պայմանների փոփոխություն,
2. Տրանսպորտային կապեր

1.0 Կլիմայական պայմանների փոփոխություն

Կլիմայի համամոլորակային փոփոխությունը և Հայաստանի տարածքում ներքին միկրոկլիմայական փոփոխությունները կարող են հանգեցնել հետևյալ հետևանքների.

- Կանխատեսվում է լանդշաֆտային գոտիների սահմանների տեղափոխություն լեռնային պրոֆիլով դեպի վեր՝ ըստ բարձրության 100-150 մ: Սպասվում է, որ անապատային գոտու մակերեսը կընդլայնվի 33%-ով, տեղի կունենա տափաստանային գոտու ընդլայնում 4%-ով և դրա բարձրացումը դեպի վեր՝ 150-200 մ-ով: Անտառային գոտում սպասվում է անտառի ստորին սահմանի բարձրացում դեպի վեր 100-200 մ: Մերձալպյան գոտու մակերեսը կկրճատվի 21%-ով, իսկ ալպյան գոտունը՝ միջին հաշվով 22%-ով:
- Կանխատեսվող ջերմաստիճանի բարձրացման և տեղումների նվազման դեպքում պետք է սպասել կլիմայի չորացման աճ և անապատացման պրոցեսների արագացում:
- Սպասվում է գետերի տարեկան հոսքի նվազում 15% և Սևանա լճի մակերեսից գոլորշիացման ավելացում 13%-14%-ով:
- Կլիմայի կանխատեսվող փոփոխության դեպքում, վեգետացիայի փուլից և տեղի բարձրությունից կախված, սպասվում է հողի խոնավության նվազում՝ 10%-30%-ով, զանազան գյուղատնտեսական մշակաբույսերի բնական խոնավ ապահովվածության նվազում՝ 7%-13%-ով և հողում խոնավության պակասորդի աճ՝ 25-50 մմ-ով:

- Կլիմայական բնութագրերի սպասվող փոփոխության դեպքում բուսաբուծության բերքատվությունը Հայաստանում կարող է նվազել 8%-14%-ով: Հացազգիների բերքատվությունը միջին հաշվով կկրճատվի 9%-13%-ով, բանջարանոցային մշակաբույսերինը՝ 7%-14%-ով, կարտոֆիլինը՝ 8%-10%-ով, պտղատու մշակաբույսերինը՝ 5%-8%-ով: Ավելի չորադիմացկուն խաղողի բերքատվությունը կարող է աճել՝ 8%-10%-ով:
- Արոտային անասնապահության համար կանխատեսվում են. արոտավայրերի ընդհանուր մակերեսի և դրանց բերքատվության կրճատում 4%-10%-ով, այդ թվում մերձալպյան և ալպյան գոտու առավել արժեքավոր և բերքատու արոտավայրերի մակերեսների կրճատում 19%-22%-ով, ինչպես նաև լեռնային խոտհարքների բերքատվության նվազում՝ 7%-10%-ով: Դրա հետ կապված սպասվում է անասունների գլխաքանակի կրճատում՝ 30%-ով և անասնապահության մթերատվության կրճատում՝ 28%-33%-ով:

## 2.0 Տրանսպորտային կապեր

Հայաստանը գյուղատնտեսական արտադրանքը խոշոր շուկաներ է արտահանում հետևյալ եղանակներով.

Բեռնափոխադրումներով՝ Բագրատաշենի սահմանակետից դեպի Վրաստան: Այնուհետև տարանցիք Վրաստանի տարածքով բեռնափոխադրվում է դեպի ՌԴ և Եվրոպա: Լարսի սահմանային անցակետով բեռնատարները շարժվում են դեպի ռուսական շուկա: Սա մրգերի և բանջարեղենի արտահանման հիմնական ճանապարհն է: Դեպի Վրաստան ավտոմոբիլային փոխադրումներ են իրականացվում Բագրատաշենի սահմանային անցակետով: Փոթիի կամ Բաթումի նավահանգիստների կողքին, իսկ այնտեղից լաստանավով դեպի ռուսական Նովոռոսիյսկ նավահանգիստ: Այս ճանապարհը հատկապես կարևոր է, երբ Լարսը փակ է: Ինքնաթիռով - ինքնաթիռները Զվարթնոց օդանավակայանից մեկնում են Մոսկվա: Մրգերն ու բանջարեղենը թարմ պահելու համար կան սառնարաններ: Այս մեթոդը օգտագործվում է մթերքները հնարավորինս թարմ վիճակում հասցնելու նպատակակետին:

ԳԼՈՒԽ 4. ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱԶԻԿ  
ԳՅՈՒՂԻ ՎԱՐԵԼՈՇՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ 10  
ՏԱՐԿԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ ՆԱԽԱԳԻԾԻ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

4.1 «ԽԵԼԱՑԻ ԳՅՈՒՂ» ԳԱՂԱՓԱՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԽԱԶԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ

Երկար ժամանակ ուսումնասիրելով ՀՀ տնտեսությունը, սահմանամերձ շրջանները և ներքին սպառման շուկան որոշեցինք Թինկ Թանկ Արմենիա վերլուծական կենտրոն ՀԿ-ի կողմից ուսումնասիրվող Խաչիկ համայնքի համար կազմել նախագիծ ջրովի հողերի օգտագործման համար:

Նախագծի գաղափարը առաջադրվել է Խաչիկ խոշորացված համայնքի ղեկավարի և մեր թիմի շնորհիվ: Արդյունքում որոշվել է սեղմ ժամկետներում կառուցել ֆինանսական հոսքերի մասին վերլուծություն և կազմել հողակտորների ճիշտ կառավարում:

Նախագծի ելակետային տվյալները և սկզբունքները հետևյալն են

- Խաչիկ գյուղի վարելահողերից նախագծին կհատկացվեն գյուղում ապրող և նախագծին համաձայն գրեթե բոլոր բնակիչների սեփական հողերը
- Տվյալ բնակչությունը անմիջական մասնակցություն է ունենալու տվյալ նախագծի իրականացման ժամանակ
- Կազմվելու են տարբեր չափսերի կապված հողակտորների դիրքից և տեսակից կոոպերատիվներ, որոնք գործելու են օրենքին համաձայն
- Ուսումնասիրվելու են տարածաշրջանի հնարավորությունները կապված հողի բերիության մակարդակի և կլիմայական առանձնահատկությունների հետ
- Կազմվելու է հստակ գործողությունների պլան
- Տվյալ նախագծի համար հնարավոր եղավ հատկացնել մոտ 600 հա անջրդի հողեր

- Համայնքը պատրաստվում է ոռոգման ցանցի վերականգնման ծրագրին

#### Անձնակազմ

Անձնակազմը կազմվելու է տեղի բնակիչների ուժերով: Միայն բացառիկ դեպքերում համայնքից դուրս մասնագետ կկանչվի: Ամբողջ նախագծի պատասխանատուն լինելու է համայնքի ղեկավարը իր աշխատակազմով: Նախագծի բոլոր ճյուղերի համար նախատեսվում են հատուկ մասնագիտացված կոոպերատիվի անդամներ, որոնք կաշխատեն նախագծի գրեթե ամբողջ մակերեսի վրա(Մեխանիզատոր, Ագրոնոմ, Բերքահավաքի պատասխանատու և այլն):

#### Նպատակ

Նախագծի հիմնական նպատակն է սահմանամերձ գյուղում ստեղծել եկամտաբեր տնտեսություն որը օրինակ կծառայի հարևան գյուղերին և ոչ միայն: Նախագծում մասնակցելու են համայնքի գրեթե բոլոր բնակիչները: Արդյունքում ստեղծվելու է կատարյալ գյուղատնտեսական համակարգ որտեղ աշխատելու են տեղացիները և միաժամանակ գրավելու է մյուս գյուղերին դիմելու ռիսկի և սկսել տվյալ նախագիծը իրենց գյուղերում:

#### Նախագծի ցուցանիշներ

Նախագծի չափման հիմնական ցուցանիշները հետևյալն են

Նախատեսվում է համայնքի 1280 հա վարելահողերից օգտագործել 600 հա

600 հա վարելահողերից 200 հա Խաղողի այգիներ 200 հա Ծիրանի այգիներ և 200 հա դաշտային կուլտուրաներ

Կազմավորվելու են մասնակիցների մոտավոր քանակով կապված վարելահողերի սեփականության իրավունքից 10 +- 5 կոոպերատիվներ կազմավորված մեկ նպատակի համար:

Ֆինանսավորման մակարդակից և արագությունից է կախված նախագծի հետգնման արագությունը, որովհետև գործ ունենք այգիների հիմնման հետ, որոնք սկսում են հասույթ գեներացնել լավագույն դեպքում 4 տարում

## Նախագծի փուլեր

Մեր վերլուծության մեջ նախատեսենք ֆինանսավորման միջին մակարդակ, որի արդյունքում ներդրումների հետզնումը նախատեսվում է նախագծի սկզբից 10 տարի անց: Նախատեսվում է 200 հա դաշտային մշակաբույսերը մշակել առաջին տարուց, իսկ այգիները խոշորացնել 5 տարվա ընթացքում ամեն տարի 34 հա՝ հասնելով 400հա:

Արդյունքում ամենաձանրաբեռնված տարիները լինելու են նախագծի 6րդ և 7րդ տարիները, որովհետև այդ ժամանակ բացի նոր տնկվող այգիներից նաև լինելու է բերքահավաքի տակ գտնվող այգիներ:

## Աշխատակազմի վերապատրաստում

Աշխատակազմի համար նախատեսվում են լրացուցիչ անվճար դասընթացներ բարձր որակավորում ունեցող մասնագետների օգնությամբ հարց ու պատասխանի հնարավորություններով մանսագիտական մակարդակը բարձրացնելու և նոր սերնդի ուսուցման համար: Աշխատակազմի կազմակերպվածության և կրթվածության մակարդակի բարձրացումը կօգնի նաև հետագա կյանքում

## Նախագծի հնարավոր ռիսկեր

Տվյալ նախագծում գործնական ռիսկերը կարելի է բաժանել երկու խմբի, որոնցից առաջինը կարելի է անվանել ագրոնոմիական, իսկ երկրորդը՝ տնտեսական: Այս բաժանումը հարկավոր է ավելի պարզ հասկանալու համար և ճիշտ մեխանիզմներ օգտագործելու համար:

Ագրոնոմիական ռիսկերը կապված են և բնակլիմայական պայմանների հետ և կոնկրետ տնկված կամ ցանված մշակաբույսի բերքատվության ցուցանիշների հետ: Առաջին տարվա ընթացքում անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել սերմանյութերի և տնկանյութերի մաքրությունը և բովանդակությունը: Այսպիսով կանխվում է տարիներ հետո դաշտային մշակաբույսերի անորակ բերքի հավանականությունը, իսկ այգիների դեպքում կբացառվի թերի բերքատվությունը և բերքի ցածր որակը:

Տնտեսական ռիսկը կարելի է բնորոշել այս նախագծի շրջանակում որպես պայմանագրերի թերի կազմման կամ բացակայության ռիսկ: Այս իրավիճակում ցանկացած թերի կազմված պայմանագիր կամ պայմանագրի բացակայություն կարող է ֆատալ հետևանքներ թողնել ամբողջ նախագծի ապագայի վրա: Այդ սխալների դեպքում նախագիծը կկորցնի թանկագին ժամանակ և բավականին մեծ ֆինանսներ, որոնք կազմում են այս նախագծի ապագայի պոտենցիալը: Անհրաժեշտ է նախագծի շրջանակում ունենալ լավ կրթված իրավաբան, ով թույլ չի տա նման իրավիճակներ:

## 4.2 ՆԱԽԱԳԾԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ

Ցանկացած նախագիծ ինչպես նաև մեր կազմած նախագիծը պետք է հիմնավորել և փաստերով ցույց տալ տվյալ գործողությունների արդյունավետությունը: Մեր նախագիծը ունի արդյունավետության երկու ճյուղ: Առաջին ճյուղը դա ֆինանսական արդյունավետությունն է, իսկ երկրորդը՝ հոգեբանական և աշխարհադաքական արդյունավետությունը :

Կարելի է սկսել հենց երկրորդից, քանի որ այն բնորոշում է մեր կազմած նախագծի բուն էությունը, ինչից հետո կսկսենք մանրամասն ներկայացնել նախագծի ֆինանսական կողմը:

Հոգեբանական և աշխարհադաքական արդյունավետություն ասելով նախագիծը իր վրա է վերցնում մեծ պատասխանատվություն սահմանամերձ գյուղում այս մաշտաբի աշխատանքներ սկսելով: Նախագիծը նպատակ ունի բացի ֆինանսականից նաև ստեղծել պայմաններ որտեղ սահմանամերձ գյուղի բնակիչը միտք չի ունենա հեռանալ հարազատ բնակավայրից այլ կնախընտրի մասնակցել նախագծին և միաժամանակ մնալով հայրենի հողի վրա կարողանալ նաև ունենալ բարեկեցիկ կյանք: Այս իրավիճակում առաջանում է լրացուցիչ մոտիվացիա հետագա սերունդներին դաստիարակելու և հայրենի հողի հետ սերտ կապ հաստատելու համար: Գաղտնիք չէ, որքան երջանիկ աշխատասեր և հզոր կամքով բնակիչ լինի այնքան նաև մեծանում է տվյալ տարածաշրջանի անվտանգության աստիճանը: Այսպիսով նախագծի օգնությամբ ստեղծվում է գործողությունների մեծ ալգորիթմ, որի արդյունքը միայն և

միմիայն բարեկեցիկ ապագայով իր սեփական հողի վրա ապրող հայ մարդն է, ով տարբերություն չի տեսնում սահմանամերձ և ոչ սահմանամերձ գյուղերի միջև և դառնում է օրինակելի համայնք ՀՀ մնացած բոլոր համայնքների համար:

Եթե խոսում ենք բարեկեցության մասին, հնարավոր չէ գնահատել այն առանց ֆինանսական բաղադրիչի: Այն կազմում է նախագծի ողնաշարը, որից կախված է նախագծի ներկան և ապագան: Նախագծի ֆինանսական արդյունավետությունը հաշվարկելու համար օգտագործվել են հետևյալ ցուցանիշները:

- Ամբողջ նախագծի NPV (Ձուտ ներկա արժեք) հաշվարկ 10 տարվա կտրվածքով
- Նախագծից Առանձնացված միայն այգիների NPV (Ձուտ ներկա արժեք) հաշվարկ 13 տարվա կտրվածքով
- Նախագծից Առանձնացված միայն այգիների հետ գնման ժամանակահատվածի հաշվարկ

Տվյալ հաշվարկները կատարելու համար անհրաժեշտ է ունենալ նախնական տվյալներ տարեկան հասույթ, ծախսեր, ներդրումներ, արտադրվող ապրանքների ինքնարժեքներ, վաճառքի գներ և այլն: Տվյալները ճիշտ հավաքագրելու համար օգտագործվել են նախագծում օգտագործվող մշակաբույսերի տեխնոլոգիական քարտերը տարբեր փուլերում որոնք կցված են հավելված 1.0 ում: Իսկ մանրամասն հաշվարկները կներկայացվեն հավելված 2.0 ում:

Աղյուսակում 4.2.1

Վայոց Ձոր Արենի համայնքի Խաչիկ գյուղի 2023թ իրացման գներ

1	Խաղողի 1 կգ մեծածախ գինը 2023թ.	325	դրամ
2	Ծիրանի 1 կգ մեծածախ գինը 2023թ.	370	դրամ
3	Ցորենի 1 կգ մեծածախ գինը 2023թ.	112	դրամ
4	Գարու 1 կգ մեծածախ գինը 2023թ.	112	դրամ
5	Կորնզան 1 կգ մեծածախ գինը 2023թ.	85	դրամ
6	Առվույտ 1 կգ մեծածախ գինը 2023թ.	80	դրամ
7	Ձմերուկ 1 կգ մեծածախ գինը 2023թ.	75	դրամ
8	Ցել	0	դրամ

Վայոց ձոր Արենի համայնքի Խաչիկ գյուղի 2023թ բերքատվության ցուցանիշներ

1	Բերքատվությունը Խաղողի	200	g/ha
2	Բերքատվությունը Ծիրանի	70	g/ha
3	Բերքատվությունը Աշնանացան Ցորենի	40	g/ha
4	Բերքատվությունը Գարնանացան Գարի	55	g/ha
5	Բերքատվությունը Կորնզան	60	g/ha
6	Բերքատվությունը Աովույտ	80	g/ha
7	Բերքատվությունը Ձմերուկ	585	g/ha
8	Ցել	0	g/ha

Ներդրման և ծախսեր ըստ մշակաբույսերի մլն ՀՀ դրամ

№	Աշխատանքի անվանումը	Քանակ	Ընդամենը՝ ծախսեր, մլն.
	<b>Այգիների հիմնում</b>		
1	Խաղողի այգու հիմնում	1 ha	6.50
2	Ծիրանի այգու հիմնում	1 ha	2.34
	Գյուղի Ոռագման համակարգ	1 Փաթեթ	44.40
	<b>Այգիների մշակություն 5 և ավելի տարի</b>		
1	Խաղողի այգու մշակություն 5 և ավելի	1 ha	3.56
2	Ծիրանի այգու մշակություն 5 և ավելի	1 ha	1.09
	<b>Այգիների մշակություն 1 ից 4 տարի</b>		
1	Խաղողի այգու մշակություն 1-4 տարի	1 ha	1.78
2	Ծիրանի այգու մշակություն 1-4 տարի	1 ha	0.49
	<b>Դաշտային կուլտուրաների մշակություն</b>		
1	Ցել	1 ha	-
2	Աովույտ	1 ha	0.25
3	Կորնզան	1 ha	0.25
4	Բանջարաբոստանային մշակաբույս(Ձմերուկ)	1 ha	1.20
5	Աշնանացան Ցորենի դաշտի մշակություն	1 ha	0.41
6	Գարնանացան Գարու դաշտի մշակություն	1 ha	0.29

Ճիշտ գյուղատնտեսական նախագիծ կազմելիս պետք է հաշվի առնել նաև մասնագիտական բոլոր նրբությունները: Այդ նրբություններից ամենակարևորը ճիշտ

ցանքաշրջանառության ներդրումն է: Նախատեսվում է օգտագործել դասական մեթոդը, որտեղ ցանքաշրջանառությունը սկսվում է հացահատիկային կուլտուրաներով շարունակվում բազմամյա խոտաբույսերով և բանջարաբոստանային մշակաբույսերով ավարտվում ցելով:

Ցանքաշրջանառության մեջ օգտագործվելու է տարածաշրջանում մշակվող հացահատիկներից աշնանացան ցորեն և գարնանացան գարին բազմամյա խոտաբույսերից առվույտ և կորնգան, իսկ բանջարաբոստանայինից հաշվարկի համար օգտագործվել է ձմերուկի տարբերակ, իսկ ցելը դա ցանքաշրջանառության մեջ դատարկ դաշտի շրջան է որտեղ ոչմիբան չի մշակվում:

Հասույթը հաշվարկվել է բազմապատկելով բերքատվության ցուցանիշը իրացման արժեքի հետ:

Ծախսերը հաշվարկված են երկու փուլով ինչպես որ առանձնացված են մակերեսների բաժանման սխեմաները:

Ֆինանսավորման տվյալ արագությունը կարելի է փոփոխել կապված իրավիճակից և հնարավորություններից: Արդյունքում կփոփոխվի հետզնման ժամանակահատվածը ինչքան արագ կատարվեն ներդրումները այնքան շուտ կլինի հետզնումը և նույնը հակառակ ուղղությամբ: Նմանատիպ ծավալներով նախագծի համար շատ լավ ցուցանիշ է 12 տարի հետզնումը ինչը կնշանակի նախագծին ներգրած են լինելու մի քանի սերունդներ միաժամանակ:

Աղյուսակում 4.2.4

400 հա հողատարածքների բաժանման այգիների հիմնման և բերքահավաքից առաջ մշակության սխեմաներ 10 տարվա կտրվածքով

№	Այգիների հիմնման ծախսեր	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031	2032	2033
		հա	հա	հա	հա	հա	հա	հա	հա	հա	հա
1	Հիմնում Խաղողի 1-4	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3				
2	Հիմնում Ծիրանի 1-4	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3				
3	Խաղողի այգու մշակություն 1-4 տարի	34	66.6	100	133.3	133.3	133.3	100	66.6	34	
4	Ծիրանի այգու մշակություն 1-4 տարի	34	66.6	100	133.3	133.3	133.3	100	66.6	34	

Աղյուսակում 4.2.5

600 հա հողատարածքների բաժանման մշակության սխեմաներ 10 տարվա կտրվածքով

№	Վարելահողերի կառավարման սխեմա	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031	2032	2033
		հա	հա	հա	հա	հա	հա	հա	հա	հա	հա
1	Խաղողի այգու մշակություն բերքահավաքի տարիներ				34	66.6	100	133.3	166.6	200	200
2	Բերքատվությունը Ծիրանի այգու մշակություն բերքահավաքի տարիներ				34	66.6	100	133.3	166.6	200	200
3	Աշնանացան ճորենի մշակություն	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3
4	Գարնանացան Գարու մշակություն	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3
5	Կորնզանի մշակություն	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3
6	Առվույտի մշակություն	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3
7	Զմերուկի մշակություն	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3
8	Ցել	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3	33.3

Նախագծի ընթացքում առաջացած համախառն հասույթ մլն ՀՀ դրամ

№	Տարեկան համախառն հասույթի հաշվարկ	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031	2032	2033
1	Հասույթ Խաղող 5 և ավել	-	-	-	221.00	432.90	650.00	866.45	1,082.90	1,300.00	1,300.00
2	Հասույթ Ծիրան 5 և ավել	-	-	-	88.06	172.49	259.00	345.25	431.49	518.00	518.00
3	Հասույթ Աշնանացան Ցորեն	14.92	14.92	14.92	14.92	14.92	14.92	14.92	14.92	14.92	14.92
4	Հասույթ Գարնանացան Գարի	20.51	20.51	20.51	20.51	20.51	20.51	20.51	20.51	20.51	20.51
5	Հասույթ Կորնզան	16.98	16.98	16.98	16.98	16.98	16.98	16.98	16.98	16.98	16.98
6	Հասույթ Առվույտ	21.31	21.31	21.31	21.31	21.31	21.31	21.31	21.31	21.31	21.31
7	Հասույթ Ձմերուկ	146.10	146.10	146.10	146.10	146.10	146.10	146.10	146.10	146.10	146.10
8	Ցել	0	0	0	0	0	0	0	0	0	0
	<b>Ընդամենը հասույթ Տարի</b>	<b>219.83</b>	<b>219.83</b>	<b>219.83</b>	<b>528.89</b>	<b>825.22</b>	<b>1,128.83</b>	<b>1,431.53</b>	<b>1,734.22</b>	<b>2,037.83</b>	<b>2,037.83</b>

Աղյուսակում 4.2.6 ում երևում է առաջին երեք տարիների ընթացքում հասույթի բացակայությունը Խաղողի և Ծիրանի այգիների տարբերակներում, ինչը պայմանավորված է այգիների հիմնման և բերքատվության միջև ընկած ժամանակից: Մնացած բոլոր կուլտուրաների մոտ նկատվում է ստաբիլությունը, որը պայմանավորված է ամեն տարի նույն մակերեսի օգտագործմամբ: Համայնքի ղեկավարը վստահեցրել է և ցույց է տվել պայմանագրեր տարբեր գործարանների հետ, որոնք խոստացել են տվյալ տնտեսություններին միշտ ապահովել բարձր իրացվելիությամբ:

Աղյուսակում 4.2.7

Նախագծի ընթացքում առաջացած համախառն ծախսեր այգիների հիմնման և մշակության առաջին փուլի կտրվածքով մին ՀՀ դրամ

№	Այգիների հիմնման և առաջին տարիների մշակության համախառն ծախսերի հաշվարկ	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031	2032	2033
1	Հիմնում Խաղողի 1-4	216.45	216.45	216.45	216.45	216.45	216.45	0	0	0	0
2	Հիմնում Ծիրանի 1-4	77.92	77.92	77.92	77.92	77.92	77.92	0	0	0	0
3	Խաղողի այգու մշակություն 1-4 տարի	60.66	118.82	178.42	237.83	237.83	237.83	178.42	118.82	60.66	0
4	Ծիրանի այգու մշակություն 1-4 տարի	16.54	32.41	48.66	64.86	64.86	64.86	48.66	32.41	16.54	0
5	Ոռոգման համակարգի ներդրում	44.40									
	<b>Ընդամենը ներդրումներ Տարի</b>	<b>415.97</b>	<b>445.60</b>	<b>521.44</b>	<b>597.06</b>	<b>597.06</b>	<b>597.06</b>	<b>227.07</b>	<b>151.23</b>	<b>77.20</b>	<b>0</b>

Ծախսերը ինչպես նշվեց բաժանվում են երկու խմբերի որոնցից մեկը նշված է Աղյուսակ 4.2.7 ում: Այս աղյուսակում առանձնացված են այգիների հիմնման, առաջին չորս տարվա մշակման և ոռոգման համակարգի վերականգնման ծախսերը: Կարելի է նկատել Այգիների հիմնման արագության շնորհիվ ծախսերի աճ 2024-2027 թթ և կտրուկ նվազում 2030թ սկսած նույնպես պայմանավորված այգիների հիմնման աշխատանքների ավարտով:

Նախագծի ընթացքում առաջացած համախառն ծախսեր ընդհանուր մշակութային կտրվածքով մին ՀՀ դրամ

№	Ընդհանուր մշակութային համախառն ծախսերի հաշվարկ	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031	2032	2033
1	Ծախս Խաղող 5 և ավել	-	-	-	121.13	237.28	356.27	474.91	593.55	712.54	712.54
2	Ծախս Ծիրան 5 և ավել	-	-	-	37.03	72.54	108.92	145.18	181.45	217.83	217.83
3	Ծախս Աշնանացան Ցորեն	13.60	13.60	13.60	13.60	13.60	13.60	13.60	13.60	13.60	13.60
4	Ծախս Գարնանացան Գարի	9.79	9.79	9.79	9.79	9.79	9.79	9.79	9.79	9.79	9.79
5	Ծախս Կորնզան	8.33	8.33	8.33	8.33	8.33	8.33	8.33	8.33	8.33	8.33
6	Ծախս Առվույտ	8.33	8.33	8.33	8.33	8.33	8.33	8.33	8.33	8.33	8.33
7	Ծախս Ձմերուկ	40.11	40.11	40.11	40.11	40.11	40.11	40.11	40.11	40.11	40.11
8	Ցել	0	0	0	0	0	0	0	0	0	0
	<b>Ընդամենը մշակման Ծախս Տարի</b>	<b>80.15</b>	<b>80.15</b>	<b>80.15</b>	<b>238.31</b>	<b>389.96</b>	<b>545.34</b>	<b>700.24</b>	<b>855.15</b>	<b>1,010.52</b>	<b>1,010.52</b>

Ծախսերի երկրորդ բաժնում իր տեղը գտան դաշտային կուլտուրաների մշակութային ծախսերը և այգիների հինգ և ավելի տարիների մշակութային ծախսերը: Այստեղ նույնպես ինչպես համախառն հասույթի աղյուսակում առաջին երեք տարիների ընթացքում այգիները դեռ հասունացած չեն լինելու բերքահավաքի ծախսեր կատարելու համար: Ծախսերի երկու աղյուսակներից միասին կարելի է նկատել առավել ծանրաբեռնված տարիներն են 2027-2029թթ:

Ընդհանուր նախագծի դինամիկ հաշվարկ (Դիսկոնտավորում, Դրամական հոսքեր NPV, IRR) մլն ՀՀ դրամ

Դիսկոնտավորման տոկոսադրույք	8	%								
Տարիներ	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031	2032	2033
Հասույթ տարեկան	219.8	219.8	219.8	528.9	825.2	1,128.8	1,431.5	1,734.2	2,037.8	2,037.8
Ծախսեր տարեկան										
Այգիների հիմնման ծախսեր	-416.0	-445.6	-521.4	-597.1	-597.1	- 597.1	- 227.1	- 151.2	- 77.2	-
Այգիների և դաշտերի մշակման ծախսեր	- 80.2	- 80.2	- 80.2	-238.3	-390.0	- 545.3	- 700.2	- 855.1	-1,010.5	-1,010.5
Դրամական հոսքեր	-276.3	-305.9	-381.8	-306.5	-161.8	- 13.6	504.2	727.8	950.1	1,027.3
Դիսկոնտի գործակից	1.00	0.86	0.79	0.74	0.68	0.63	0.58	0.54	0.50	0.46
Դիսկոնտացված ԴՀ	-276.3	-262.3	-303.1	-225.3	-110.1	- 854.7	294.2	393.2	475.3	475.8
NPV	<b>453.0</b>									
IRR	<b>14.4%</b>									

Նախագծի շրջանակներում ներդրումների և ընդհանրապես աշխատանքների արդյունավետության ամենակարևոր ցուցանիշը դա զուտ ներկա արժեքի որոշումն է ժամանակի կտրվածքի շրջանակում: Այս նախագիծը տասը տարվա դիսկոնտավորված դրամական հոսքերի գումարի արդյունքում ստացվել է դրական բարձր արդյունք, որը խոսում է նախագծի արդյունքների արդյունավետության բարձր մակարդակի մասին: Ներքին եկամտաբերության տոկոսադրույքը նույնպես ստացվել է ներկա բանկային համակարգի

պայմաններում փոխառություն ձեռք բերելու համար: Այս իրավիճակը թույլ է տալիս ավելի շատ փոխառու միջոց կիրառել ավելի կարճ ժամանակահատվածում ինչը կարագացնի նախագծի ակնկալվող արդյունքները:

Աղյուսակում 4.2.10

Նախագծից առանձնացված այգիների դինամիկ հաշվարկ (Դիսկոնտավորում, Դրամական հոսքեր NPV, IRR) մլն ՀՀ դրամ

Դիսկոնտավորման տոկոսադրույք	8		%								
	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031	2032	2033	2034
<b>Տարիներ</b>	<b>2024</b>	<b>2025</b>	<b>2026</b>	<b>2027</b>	<b>2028</b>	<b>2029</b>	<b>2030</b>	<b>2031</b>	<b>2032</b>	<b>2033</b>	<b>2034</b>
<b>Հասույթ տարեկան</b>	-	-	-	309.06	605.39	909.00	1,211.70	1,514.39	1,818.00	1,818.00	1,818.00
<b>Ծախսեր տարեկան</b>											
<b>Այգիների հիմնման ծախսեր</b>	-415.97	-445.60	-521.44	-597.06	-597.06	-597.06	- 227.07	- 151.23	- 77.20	-	-
<b>Այգիների և դաշտերի մշակման ծախսեր</b>	-	-	-	158.16	-309.81	-465.19	- 620.09	- 775.00	- 930.37	- 930.37	- 930.37
<b>Դրամական հոսքեր</b>	-415.97	-445.60	-521.44	-129.83	-301.48	-153.24	364.53	588.17	810.43	887.63	887.63
<b>Դիսկոնտի գործակից</b>	1.00	2.00	3.00	4.00	5.00	6.00	7.00	8.00	9.00	10.00	11.00
<b>Դիսկոնտավորված ԴՀ</b>	-415.97	-382.03	-413.94	- 95.43	-205.18	- 96.57	212.70	317.77	405.41	411.14	380.69
<b>NPV</b>	118.60										
<b>IRR</b>	9.5%										

Հաշվել զուտ ներկա արժեքը և միևնույն ժամանակ չհաշվել հետ գնման ժամանակահատվածը կարող է առաջացնել սխալ տպավորություններ: Նախագծից առանձնացվել են ներդրումների տեսքով ամենաճախսատար օղակը այսինքն այգիների հատվածը: Հաշվարկվել է նախագծից անկախ առանձնացված տարբերակով այգիների զուտ ներկա արժեքը ներքին

Եկամտաբերության տոկոսադրույքը և արդյունքում հետ գնման ժամկետը: Անգամ նախագծից առանձնանալով միևնույն է այգիների հիմնումը մնում է ձեռնտու առաջացնելով դրական զուտ ներկա արժեքի ցուցանիշ, բայց մեկ բացառությամբ: Այս դեպքում անհրաժեշտ է նախագծի ժամկետը երկարացնել մեկ տարով, որպեսզի այն դաշտային կուլտուրաներից անկախ և ֆինանսավորման նույնարագության պայմաններում առաջացնի շահույթ:

Աղյուսակում 4.2.1

Նախագծից առանձնացված այգիների հետգնամ ժամկետի որոշում

Հետգնման ժամանակահատված	2029	2030	2031	2032	2033	2034	2035	2036	2037	2038	2039	2040
<b>Ներդրումներ</b>	-3,629.69											
<b>Դրամական հոսքեր</b>		- 415.97	- 445.60	- 521.44	- 129.83	- 301.48	- 153.24	364.53	588.17	810.43	887.63	887.63
<b>Կուտակված դրամական միջոցներ</b>		-4,045.67	-4,491.27	-5,012.71	-5,142.54	-5,444.02	-5,597.26	-5,232.73	-4,644.56	-3,834.14	-2,946.51	-2,058.88

Հետգնման ժամանակահատված	12.10
----------------------------	-------

Նախագծից առանձնացված այգիների հիմնման մշակման և բերքահավաքի արդյունքների ուսումնասիրության արդյունքում հնարավոր եղավ նաև ստանալ հետգնման ժամանակահատվածի ցուցանիշ: Կազմելով սահմանամերձ համայնքում այսպիսի նախագիծ և ունենալով նման ցուցանիշ նշանակում է, որ մենք գործ ունենք բացառիկ հնարավորության հետ մեր երկիրը շատ արագ տեմպերով զարգացնելու և հզորացնելու համար:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- PEST վերլուծության արդյունքներով առավել ակնհայտ դարձան ՀՀ-ում գյուղատնտեսության արդի հիմնախնդիրներից առաջնայինները, որոնք ժամանակի ընթացքում պետք է լուծվեն: Մասնագետների խոսքով ներկա պահին ՀՀ գյուղատնտեսությունը և ընդհանրապես տնտեսական վիճակը ապրում է նոր դարաշրջան: Տվյալ շրջանում ակնկալվում է տնտեսության շատ արագ աճ և միաժամանակ բնակչության բարեկեցության կենսամակարդակի կտրուկ դրական փոփոխություններ :
- SWOT վերլուծության արդյունքներով հասկանալի է դառնում գյուղատնտեսության զարգացման պոտենցիալը : Օգտագործելով ներգաղթող բնակչության ուժը, պետության կողմից տրամադրվող սուբսիդիաները և ֆինանսական կազմակերպությունների բացառիկ առաջարկները՝ հնարավոր է դառնում բարձրացնել գյուղատնտեսության մեքենայացման աստիճանը, ավելացնել արտադրանքների ծավալները, ճիշտ նախագծերի օգնությամբ մեղմել կլիմայական պայմանների բացասական ազդեցությունները, զարգացնել տարածաշրջանում տրանսպորտային կապերը: Պետք է նաև աշխատել շուկայում էլ ավելի զարգացնելու հայկական ապրանքատեսական ու ճանաչելիությունը, շուկայում ստեղծել բարենպաստ պայմաններ նոր տնտեսությունների համար և աշխատել ինքնարժեքի հնարավոր մրցակցային մակարդակի պահպանման վրա:
- Ուսումնասիրելով PEST և SWOT վերլուծությունները, կազմելով ճիշտ աշխատանքային սխեմա՝ հաջողվեց կազմել գերազանց նախագիծ, որը կաշխատի մեր վերը նշված նպատակների իրականացման համար: Ֆինանսական դրությունը հաշվի առնելով կարելի է հասկանալ, որ անհրաժեշտ է ներդնել բոլոր հնարավոր ռեսուրսները և ուժերը այս նախագծի արդյունքը ապահովելու համար:
- Հաշվարկների արդյունքում հնարավոր եղավ պարզել նախագծի զուտ ներկա արժեքը 10 տարի ժամկետի կտրվածքով և պարզվեց մաքսիմալ

տոկոսադրույքը, որից բարձրի դեպքում փոխառու միջոցները ակտուալ չեն լինի:

- Զուտ ներկա արժեքը 8 տոկոս դիսկոնտավորման տոկոսադրույթի պարագայում կազմեց + 453,003,401 դրամ ինչը վկայում է նախագծի արդյունավետության բարձր ցուցանիշի մասին: Ինչ կապված է փոխառությունների տոկոսադրույքներին այն պետք է չգերազանցի 14,355 % ինչը << ներկա բանկային համակարգում ավելի քան հնարավոր է:

Որպես առաջարկություններ կարելի է առանձնացնել մի քանի ուղղություն: Այդ ուղղությունները կարելի է բաժանել ըստ առաջնահերթության.

- Սոցիալ հոգեբանություն
- Ռազմական պատրաստվածություն
- Բարեկեցություն
- Ընդհանուր << տնտեսության զարգացում
- Բնակչության երջանկություն

Ներկա պահին ինչպես երբևէ անհրաժեշտ է աշխատել բոլոր սահմանամերձ գյուղերի բնակիչների հետ: Պետք է իրենց հույս և հավատ ներշնչել իրենց ապագայի նկատմամբ իրենց սեփական հողի վրա: Միայն խոսքերով հնարավոր չի մարդկանց հավաստիացնել, թե իրենք կունենան ապագա: Անհրաժեշտ է գործով, օրինակ ծառայելով, ստիպելով, աշխատելով ապացուցել և ցույց տալ իրենց հնարավորությունները: Ոչ մի ժամանակակից զարգացած ռազմական տեխնիկա չի կարող պաշտպանել գյուղը այնպես ինչպես այն կանի սեփական ժողովուրդը: Իսկ սեփական գյուղը պաշտպանելու համար անհրաժեշտ է ստեղծել և արարել ամեն օր, ամեն ժամ, որպեսզի լինի ինչ-որ բան ինչի համար կարելի է կռվել և պաշտպանվել:

Սահմանամերձ գյուղերի բնակչության սոցիալ-հոգեբանական վիճակը, ռազմական պատրաստվածությունը, բարեկեցությունը, << տնտեսությունը և ամենակարևորը երջանկությունը իրար հետ սերտ կապված են: Բարձր հոգեբանական վիճակը ստեղծում է աշխատելու մոտիվացիա, աշխատելուց առաջանում է բարեկեցությունը, բարեկեցությունից առաջանում է բարձր տնտեսական արդյունքները, բարձր տնտեսական արդյունքներից առաջանում է եռակի մոտիվացիա նորը ստեղծելու և

արարելու, ստեղծածը անհրաժեշտ է լինում պաշտպանել, իսկ այս բոլորի արդյունքում առաջանում է աշխարհում ամենակարևոր զգացողությունը՝ երջանկությունը:

Զարմանալի չէ, որ ՀՀ-ը մինչև 18 տարեկանների շարքում աշխարհում երջանկության ինդեքսով առաջատարներից է, բայց 18-ից բարձր բնակչության երջանկության ցուցանիշով վատագույններից է: Անհրաժեշտ է բոլոր ռեսուրսները ներդնել, կատարել անհրաժեշտ բոլոր քայլերը ապագա սերունդների հորիզոնականը երջանկության համաշխարհային դասակարգման աղյուսակում բարձրացնելու համար:

Առաջարկում ենք

Օգտագործել բոլոր հնարավոր ջրային ռեսուրսները և գյուղատնտեսության և արտադրության նպատակներով ինչից հետո պարզ կլինի, թե ինչպես է կարելի ավելացնել ջրի պաշարը և տարածաշրջաններում ինչքան ջուր է պետք պահեստավորել տարվա ընթացքում:

Օգտագործել մեր կազմած նախագծի կառուցվածքը և միտքը, հարմարեցնել տարբեր տարածաշրջանների հետ: Գյուղատնտեսական տվյալ նախագիծի ավելի ծավալուն տարբերակը կարելի է օգտագործել պետական մակարդակով շատ քիչ նմանեցնելով խորհրդային միության ժամանակ գյուղատնտեսության վարման սխեմային, որտեղ պետություններ որոշում, թե որտեղ, ինչ պետք է մշակվի և միաժամանակ լուծվում էր ներկա պահին գյուղացիների առջև ծառայած ամենամեծ խնդիրներից երկուսը՝ ապրանքի որակի ապահովումը և արտադրված ապրանքի իրացումը: Պետությունը պետք է ոչ միայն թելադրի, թե ինչ է պետք մշակել այլ նաև պետք է պարտավորվի ապահովել ապրանքի ամբողջական իրացումը անգամ նաև շուկայական գնից մի փոքր ցածր: Արդյունքում գյուղացին կազատվի ավելորդ անհանգստությունից և իր ամբողջ ներուժը կօգտագործի իր տնտեսության բարելավման և զարգացման համար:

Կազմակերպել պետական մակարդակով մոտիվացիոն սոցիալական գովազդներ կապված մեր նախագծի հետ: Ամեն օր, ամեն ժամ պետք է բոլորը մտածեն և խոսեն տվյալ նախագծի արդյունավետության մասին: Արդյունքում կառաջանա համահայկական գաղափար որտեղ բոլորս միասին կկառուցենք մեր երազանքի Հայաստանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Մ. - Գյուղացիական տնտեսությունների կոոպերացումը, կառավարումը և կազմակերպումը. Երևան Նաիրի հրատարակչություն 2006թ 156 էջ
2. Ավետիսյան Ա.- Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը Երևան Լիմուշ հրատարակչություն 2010թ 233 էջ
3. Բայադյան Ա.Հ.-ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Երևան Գիտություն հրատարակչություն 2013թ 144 էջ
4. Բայադյան Ա.Հ.-Ֆինանսական միջոցների կազմավորման, օգտագործման և բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում Երևան Գիտություն հրատարակչություն 2016թ 184 էջ
5. Բայադյան Ա.Հ.-Ֆինանսական վերլուծություն Երևան Լիմուշ հրատարակչություն 2008թ 300 էջ
6. Գևորգյան Ա.- Գյուղատնտեսական կոոպերացիա Երևան Տնտեսագետ հրատարակչություն 2002թ 177 էջ
7. Թովմասյան Ռ.Ա.- Տնտեսագիտության տեսություն Երևան Տնտեսագետ հրատարակչություն 2004թ 208 էջ
8. Հ. Շտրոբել Գյուղատնտեսության էկոնոմիկայի հասկացությունների և սահմանումների բացատրական բառարան. Երևան, ՀՊԱՀ, 2010թ, 266 էջ.
9. Մաթևոսյան Ա.- Հարկաբյուջետային քաղաքականությունը և ՀՀ կառուցվածքային բյուջեի գնահատականը Երևան Տնտեսագետ հրատարակչություն 2014թ 56 էջ
10. Владимир Токарев. SWOT – анализ и стратегический аудит фирмы и стартапа. Собрание сочинений.. — Litres, 2021. — 144 с. — ISBN 978-5-0424-6386-0.
11. Гусева Н. И., Миннигалева Г. А., Дворяшина М. М. Практики менеджмента в российских компаниях. Том 2. — Издательский Дом ВШЭ, 2022. — 108 с. — ISBN 978-5-7598-2705-4.

12. Жданкин Николай Александрович. Стратегический менеджмент. Учебник. — Кнорус, 2022. — 398 с. — ISBN 978-5-406-08867-8.
13. Н. Титова, В. Колочева, О. Лямзин. Разработка стратегических альтернатив развития предприятий розничной торговли в конкурентной среде с использованием PEST-анализа. — Litres, 2022. — 60 с. — ISBN 978-5-4573-9547-3.
14. Островская В. Н. Анализ отрасли и SWOT-анализ в конкурентно-интеграционном бенчмаркинге // Terra Economicus. — 2008. — № 4—3.
15. Роберт Грант. Современный стратегический анализ = Contemporary Strategy Analysis. Text and cases. — Питер, 2022. — 80 с. — ISBN 978-5-4461-0381-2.
16. Титов Сергей Анатольевич, Шубин Станислав Александрович. Современный стратегический анализ. Учебное пособие. — Кнорус, 2022. — 286 с. — ISBN 978-5-406-09456-3.
17. Филип Котлер, Роланд Бергер, Нильс Бикхофф. Стратегический менеджмент по Котлеру. Лучшие приемы и методы = The Quintessence of Strategic Management: What You Really Need to Know to Survive in Business. — Альпина Паблишер, 2012. — 144 с. — ISBN 978-5-9614-2213-9.
18. 2023-02-22 /[https://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2016-2018/harkayin\\_katarelagortsman\\_2016.pdf](https://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2016-2018/harkayin_katarelagortsman_2016.pdf)
19. ՀՀ Վիճակագրական կոմիտե 2023-03-07  
/ [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_22a\\_510.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_22a_510.pdf)
20. 2023-10-28 /<https://www.luys.am/img/artpic/small/7eb82e03aa3ebba64cf604-INFLATION.pdf>
21. 2023-12-17 <http://agroecoarm.com/wp-content/uploads/2016/07/-The-ways-of-agricultureal-development-in-Armenia.pdf>
22. 2023-07-25 <http://powerbranding.ru/biznes-analiz/pest/example/>
23. ՀՀ Վայոց Ձոր մարզ 2023-10-14 <http://vdzor.mtad.am/about-communities/764/>
24. 2023-08-10 <https://adeptik.com/blog/puti-snizheniya-sebestoimosti-produkcii/>

25. 2023-09-15 <https://agbz.ru/news/10-tendentsiy-selskogo-khozyaystva-i-agrobiznesa/>
26. 2023-10-18 <https://brokers.am/ru/blog/export-agricultural-products>
27. 2023-06-17 <https://enlightngo.org/post/20256>
28. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն 2023-12-15  
<https://mineconomy.am/page/1338>
29. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն 2023-07-13 <https://mineconomyam/page/1349>
30. 2023-10-04 <https://mineconomy.am/page/2069%20>
31. 2023-11-09 <https://mir24.tv/othernews>
32. 2023-09-04 <https://nature-ic.am/en/ccinarmenia>
33. 2023-05-08 <https://ru.wikipedia.org/wiki/PEST-%D0%B0%D0%BD%D0%B0%D0%BB%D0%B8%D0%B7>
34. 2023-05-03 <https://sendpulse.com/ru/support/glossary/swot-analysis>
35. 2023-07-03 <https://vc.ru/marketing/501028-gayd-po-3-vidam-swot-analiza->
36. ՀՀ իրավական տեղեկատվական համակարգ 2023-06-16  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=32672>
37. 2023-09-21 <https://www.calltouch.ru/blog/glossary/swot-analiz/>
38. ՀՀ Կենտրոնական բանկ 2023-06-18  
<https://www.cba.am/am/sitepages/achfinancialbankingsystem.aspx>
39. 2023-08-16 <https://www.civilnet.am/news/691378/>
40. Ֆորբս 2023-04-19 <https://www.forbes.ru/brandvoice/486149-rastit-vnedrat-rassirat-osnovnye-trendy-agrobiznesa>
41. 2023-10-17 <https://www.hse.ru/edu/vkr/219613769>
42. ՀՀ ֆինանսների նախարարություն 2023-07-25  
[https://www.minfin.am/hy/content/arzhuyti\\_mijazgayin\\_himnadram\\_imf\\_/#sthash.yXbzKmCZ.dpbs](https://www.minfin.am/hy/content/arzhuyti_mijazgayin_himnadram_imf_/#sthash.yXbzKmCZ.dpbs)
43. 2023-07-10 <https://www.unisender.com/ru/glossary/pest-analiz/#anchor-1>
44. 2023-05-12 <https://www.unisender.com/ru/glossary/shto-takoe-swot-analiz/>

## Հավելված 1.0

### ՆԱԽԱԳԵՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՔԱՐՏԵՐ

Աղյուսակ 1.0

<b>Աշխատանքի անվանումը</b>					
h/h	Աշխատանքի անվանումը	Կատարման ժամկետը	Պահանջվող մեքենաները, գյուղ գործիքները	Ագրոտեխնիկական պահանջը	Արժեքը, հզ դր
